Հավելված N 3
ՀՀ կառավարության 2026 թվականի
հունվարի 29-ի N 113 - Լ որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2026-2030 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ՝
1. Լրիվ ծանրաբեռնվածության համարժեքով հետազոտողների քանակը՝ 6000 պետական ֆինանսավորմամբ: Մասնավոր հատվածում աշխատող հետազոտողների ներառմամբ՝ 8000,
2. Վեբ օֆ սայնս միջազգային ինդեքսավորման համակարգում ինդեքսավորվող պարբերականներում գիտական հրապարակումների քանակը՝ 6000/տարի,
3. 2030 թվականին ՀՆԱ-ի նկատմամբ ՀԱՄ ոլորտին հատկացումների մասնաբաժնի թիրախային արժեքն է 1.0 % -ը, այդ թվում պետական ներդրումների մասով՝ 0.75 %, իսկ մասնավոր ներդրումների մասով՝ 0.25 %
4. Գիտության և տեխնիկայի գերակա ուղղություններով իրականացվող առնվազն 4 համալիր ծրագիր,
5. Արտոնագրային համագործակցության մասին պայմանագրի շրջանակում ՀՀ ռեզիդենտ կազմակերպությունների գրանցած արտոնագրերի քանակ՝ 70 (2026-2030 թթ. ընթացքում),
6. Բուհերի հետ ինտեգրված խոշոր պետական գիտական կազմակերպություններ՝ մինչև 15,
7. Բուհական գիտատար ստարտափների քանակ 2030 թվականին՝ 30:

NN ը/կ	Նպատակներ և գործողություններ	Ցուցանիշ	(Հենանիշ) / Թիրախ	Վերջնա-ժամկետ	Ֆինանսավորում (ՀՀ պետական բյուջե)	Կատարող / Համակատարող
1.	ՌՆ-1 Հետազոտությունների գերազանցության խթանում					
1.1.	ՄԱ1-1 *Մարդկային ներուժի զարգացում և պահպանում* **Վերջնական արդյունք՝** 2030 թվականի դրությամբ արտերկրի առաջատար գիտական կենտրոններում վերապատրաստված գիտաշխատողները կկազմեն երիտասարդ և միջին տարիքի գիտաշխատողների քանակի 30% -ը, դոկտորանտուրայում սովորողների քանակությունը 2030 թվականին կլինի առնվազն 800 ուսանող, իսկ 2026-2030 թվականների ընթացքում գիտական աստիճան ստացածների քանակությունը կլինի 1500՝ որից ԲՏՃՄ գիտակարգերում գիտական աստիճան ստացածների մասնաբաժինը կլինի 70%-ից ավել: Արտերկրի ղեկավար կամ խորհրդատու ունեցող գիտական խմբերի քանակը կազմում է առնվազն 400: Միջգիտակարգայնությունն ապահովելու նպատակով մինչև 200 հետազոտող մասնակցել է նոր հմտությունների ձեռքբերման դասընթացների: Հետազոտողների մինչև 55 տարեկան տարիքային խմբի առնվազն 60% -ի շրջանակում իրականացվել է անգլերենի իմացության մակարդակի ստուգում և գործընկեր կազմակերպությունների հետ համագործակցությամբ կազմակերպվել են անգլերենի իմացության բարելավման դասընթացներ՝ գիտելիքի հետագա ստուգմամբ: 2030 թվականի դրությամբ գիտության համակարգի հանրային հատվածում լրիվ ծանրաբեռնվածությամբ աշխատող հետազոտողների թիվը կկազմի 6000:					
1.1.1.	Գ1.1.1. Գիտական աշխատողների և հետազոտողների առաջատար	Իրականացվում են գիտական կազմակերպությունների մինչև 55 տարեկան հետազոտողների վերապատրաստման ծրագրեր աշխարհի առաջատար հետազոտական	(34) 2026թ.-30 2027թ.-120 2028 թ.-240	2026-2030 թթ. դեկտեմբերի 1-ին տասնօրյակի	180,000,000 720,000,000 1,440,000,000	ԿԳՄՄՆ ԲԿԳԿ

	կենտրոններում վերապատրաստման ծրագրի իրականացում	կենտրոններում՝ այդ թվում գործընկեր բուհերում և հետազոտական կազմակերպություններում՝ 3-12 ամիս տևողությամբ, ներառյալ դոկտորանտների հետազոտական աշխատանքների որոշակի մասն արտերկրի կենտրոններում իրականացնելը: Վերապատրաստման մասնակցածների քանակ:	2029 թ.-500 2030 թ.-1000	դրությամբ	3,000,000,000 6,000,000,000	
1.1.2.	Գ1.1.2. Դոկտորանտուրայում կրթության և հետազոտությունների արդյունավետ կազմակերպում	Կառավարության որոշմամբ պետության կողմից ուսանողներին տրամադրվող կրթաթոշակների տրամադրման կարգով ամրագրվել է դոկտորանտուրայում սովորողներին կրթաթոշակների (ուսման վարձի փոխհատուցման նպատակով) տրամադրման կարգը և պայմանները, որը խրախուսում է ԲՏՃՄ մասնագիտություններով կրթությունը: Տվյալ տարում դոկտորանտուրայում սովորողների քանակությունը:	(553) 2026 թ.-600 2027 թ.-650 2028 թ.-700 2029 թ.-750 2030 թ.-800	2026-2030թթ. հոկտեմբերի 1-ին տասնօրյակ	210,000,000 227,500,000 245,000,000 262,500,000 262,000,000	ԿԳՄՄՆ ԲԿԳԿ
1.1.3.	Գ1.1.3. Դոկտորանտուրայում ուսանողներին հետազոտական դրամաշնորհների տրամադրում	«Ասպիրանտների և երիտասարդ հայցորդների հետազոտությունների աջակցության ծրագիր» մրցույթը վերաձևակերպվել է «Դոկտորական հետազոտությունների աջակցության ծրագիր» մրցույթի, որի շրջանակներում որոշակի պայմանների բավարարող դոկտորանտներին տրամադրվում է դրամաշնորհ՝ աշխատանքի վարձատրության և հետազոտական աշխատանքի հետ կապված նախնական կարիքների բավարարման համար՝ մինչև 3 տարի ժամկետով: Ընթացիկ շահառուների քանակը:	(110) 2026 թ.-150 2027 թ.-200 2028 թ.-250 2029 թ.-320 2030 թ.-400	2026-2030թթ. հոկտեմբերի 1-ին տասնօրյակ	600,000,000 800,000,000 1,000,000,000 1,280,000,000 1,600,000,000	ԿԳՄՄՆ ԲԿԳԿ
1.1.4.	Գ1.1.4. Արտերկրի առաջատար գիտնականների ներգրավում դոկտորական ատենախոսությունների ղեկավարման աշխատանքներում	Ստեղծված է իրավական հստակ շրջանակ, որի արդյունքում հնարավորություն է ստեղծվում ներգրավել արտերկրի առաջատար հետազոտողներին որպես դոկտորական աշխատանքների ղեկավարներ: Արտերկրի ղեկավար ունեցող դոկտորանտների քանակ:	(<10) 2026 թ.-10 2027 թ.-20 2028 թ.-40 2029 թ.-80 2030 թ.-120	2026-2030թթ. նոյեմբերի 1-ին տասնօրյակ	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջում	ԿԳՄՄՆ ԲԿԳԿ
1.1.5.	Գ1.1.5. Հեռավար լաբորատորիաների հիմնադրման,	Հիմք ընդունելով նախորդող ժամանակահատվածում ոլորտում վարվող քաղաքականությունը՝ վերանայված են	(160) 2026 թ.-200 2027 թ.-250	2026-2030թթ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ	6,000,000,000 7,500,000,000	ԿԳՄՄՆ ԲԿԳԿ

	Լաբորատորիաների ամրապնդման, Ինտեգրման և առաջատար հետազոտությունների իրականացման մրցույթների կազմակերպում	մրցույթների պայմանները՝ դնելով մուտքային ավելի բարձր պահանջներ, կատարողականի ավելի բարձր պայմաններ և արտերկրի գործընկերոջից ակնկալիքների հստակ շրջանակ՝ կազմակերպվում են նշված համակարգային նշանակության մրցույթները: Տվյալ տարում մրցույթների շրջանակներում երաշխավորված ընթացիկ ծրագրերի քանակ:	2028 թ.-300 2029 թ.-350 2030 թ.-400		9,000,000,000 10,500,000,000 13,000,000,000	
1.1.6.	Գ1.1.6. Գլոբալ տաղանդների ներգրավման ծրագրի իրականացում	Վերանայվել է ՀՀ տարածքում արտերկրի գիտնականների հետազոտությունների իրականացման ծրագրի տրամաբանությունը՝ նախատեսելով կարիերայի տարբեր մակարդակներում գտնվող հետազոտողների ներգրավման հնարավորություններ՝ յուրաքանչյուր ենթածրագրի համար սահմանելով դրանցից ակնկալիքները: Նախատեսված են նաև հետագա շարունակականությունն ապահովող ընթացակարգերը: Գլոբալ տաղանդների ներգրավման ծրագիրը և ենթածրագրերը մեկնարկած է: Ծրագրի շահառուների քանակ:	(25) 2026 թ.-32 2027 թ.-45 2028 թ.-60 2029 թ.-100 2030 թ.-150	2026-2030թթ. դեկտեմբերի 1-ին տասնօրյակ	384,000,000 540,000,000 720,000,000 1,200,000,000 1,800,000,000	ԿԳՄՄՆ ԲԿԳԿ
1.1.7.	Գ1.1.7. Արդյունավետ աշխատող հետազոտողների քանակի ավելացում	Հանրային գիտական կազմակերպություններում աշխատաժամանակի լրիվ ծանրաբեռնվածությամբ հետազոտողների քանակությունն ավելացել է՝ մրցութային ծրագրերով ներգրավված հետազոտողների և երիտասարդ կադրերի ներգրավմամբ, որը զուգակցված է ցածր արդյունավետությամբ աշխատող հետազոտողների ազատմամբ: Ներդրված է նաև ճարտարագիտատեխնիկական պաշտոններում առավել ակտիվ ուսանողների ներգրավման մեխանիզմը, ինչը կկանխի վաղ ուսանողական տարիներին ուսանողների արտահոսքը այլ ոլորտներ: Աշխատաժամանակի լրիվ ծանրաբեռնվածությամբ (FTE) աշխատողների թիվը:	(3012) 2026 թ.- 3500 2027 թ.- 4000 2028 թ.-4500 2029 թ.-5000 2030 թ.- 6000	2026-2030թթ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ	1,485,000,000 2,970,000,000 4,455,000,000 5,940,000,000 8,874,360,000	ԿԳՄՄՆ ԲԿԳԿ
1.1.8.	Գ1.1.8. Գլոբալ առաջնորդության ծրագիր	Մշակվել է գլոբալ առաջատար, բարձր մրցունակությամբ և մասնագիտական բարձր արտադրողականության փուլում գտնվող	(0) 2029 թ.-2 2030 թ.-5	2029-2030 թթ. դեկտեմբերի 3-րդ	800,000,000 2,000,000,000	ԿԳՄՄՆ ԲԿԳԿ

		հետազոտողների ներգրավման ծրագիրը, որն իրականացվում է «Ակադեմիական քաղաք» ծրագրի շրջանակներում կառուցվելիք ենթակառուցվածքների շուրջ: Ծրագիրն իրականացվում է գիտության և տեխնիկայի գերակայությունների ուղղությամբ և այլ ծրագրերի համեմատությամբ հանդիսանում է խոշորամասշտաբ՝ երաշխավորելով հետազոտողի տեղափոխությունը Հայաստանի Հանրապետություն և տարեկան շատ խոշոր բյուջեով ֆինանսավորում մինչև 10 տարվա կտրվածքով՝ միջանկյալ արդյունքային:		տասնօրյակ		
1.1.9.	Գ1.1.9. Նոր հմտությունների ձեռքբերման հնարավորությունների ստեղծում	Համալսարաններում և գիտական կազմակերպություններում մշակվել են հետազոտողների վերավորակավորման կամ նոր հմտությունների ձեռք բերման կարճ ծրագրեր (ԱԲ կիրառության ոլորտներ, նոր սարքային մեթոդներ ու գործիքներ, հետազոտության կազմակերպման ժամանակակից ընթացակարգեր ու ստանդարտներ և այլն): Մշակված դասընթացների/մոդուլների քանակ:	(-) 2027 թ.-5 2028 թ.-10 2029 թ.-20 2030 թ.-25	2027 թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջում	ԿԳՄՄՆ ԲԿԳԿ / համալսարաններ
1.1.10.	Գ1.1.10. Նոր հմտությունների ձեռքբերմանն աջակցություն	Հետազոտողներն ու ակադեմիական կազմի այլ աշխատակիցները վերապատրաստվել են ներդրված ծրագրերով: Վերապատրաստումները ներդրված են որպես շարունակական մասնագիտական զարգացման պայմաններ և իրականացվում են կազմակերպությունների ներքին ռեսուրսներով և միտված են ժամանակակից հմտությունների և կարողությունների ձեռքբերմանը (տվյալագիտություն, ԱԲ գործիքներ, կիբեռգրագիտություն և այլն): Վերապատրաստմանը մասնակցած ակադեմիական կազմի աշխատակիցների քանակ:	(0) 2028 թ.-50 2029 թ.-100 2030 թ.-200	2028-2030թթ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջում	ԿԳՄՄՆ ԲԿԳԿ / համալսարաններ
1.1.11.	Գ1.1.11. Անգլերենի իմացության բարելավում	Մրցութային կարգով ընտրվել են անգլերեն ուսուցանող կազմակերպություններ, այդ թվում՝ համալսարանների լեզվի կենտրոններ, որոնց	(0) 2027 թ.-400 2028 թ.-750	2027-2030թթ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ	360,000,000 675,000,000	ԿԳՄՄՆ ԲԿԳԿ

		միջոցով կազմակերպվում է մինչև 55 տարեկան տարիքային խմբի հետազոտողների անգլերենի իմացության կատարելագործման ծրագրեր՝ հասցնելով մինչև լեզվի տիրապետման B2 մակարդակ: Լեզվի դասընթացներին մասնակցած հետազոտողների քանակ:	2029 թ.-1000 2030 թ.-1560		900,000,000 1,404,000,000	
1.2.	ՄԱ1-2 *Միջազգային ծրագրերին մասնակցության խթանում և գլոբալ հասանելիություն* **Վերջնական արդյունք՝** ԵՄ շրջանակային ծրագրերից ստացված դրամաշնորհներում կարողությունների զարգացման ենթածրագրի շրջանակում ստացված դրամաշնորհների համամասնության հավասարակշռում՝ ի հաշիվ գիտական գերազանցության, նորարարությունների և գլոբալ մարտահրավերների լուծմանը միտված ծրագրերի շրջանակներում ստացված դրամաշնորհային ծրագրերի ծավալների ավելացման: Ընդլայնման ենթածրագրի շրջանակում ներգրավված գումարների մասնաբաժինն ընդհանուրի մեջ՝ 77%-ի փոխարեն՝ առավելագույնը 50%՝ 2030 թվականի դրությամբ, գլոբալ գիտափորձերում մասնակցությունը 2030 թվականի դրությամբ՝ 15, դրանցում ներգրավված երիտասարդ հետազոտողների կամ ուսանողների քանակը՝ առնվազն 100, երկկողմ միջպետական համագործակցությունների քանակը՝ 10				
1.2.1.	Գ1.2.1. ԵՄ հետազոտությունների և նորարարությունների շրջանակային ծրագրերում գիտական գերազանցության, նորարարությունների և գլոբալ մարտահրավերների լուծմանը միտված ենթածրագրերում մասնակցության ավելացում	Ներդրված են խրախուսման և աջակցության մեխանիզմներ, որոնք նպաստելու են, որ շրջանակային ծրագրի ենթածրագրերում մասնակցությունը և երաշխավորված ծրագրերը շեղված են դեպի գիտական գերազանցության, նորարարությունների և գլոբալ մարտահրավերների լուծմանը միտված ենթածրագրերի կողմ: Մասնավորապես, ծրագրերին մասնակցությունը խրախուսող կառույցի կատարողականի շրջանակներում դրված են ռազմավարության սույն գործողությամբ նախանշված ցուցանիշները, ինչպես նաև սահմանվելու է խրախուսման մեխանիզմ՝ նշված ենթածրագրերում գրանցված հաջողությունների համար: Գիտական կազմակերպություններին տրամադրվելու է անհրաժեշտ խորհրդատվություն նշված ենթածրագրերում մասնակցության հայտերի մշակման համար: Գիտական գերազանցության, նորարարությունների և գլոբալ մարտահրավերների լուծմանը միտված ենթածրագրերից ներգրավված ֆինանսավորման մասնաբաժին ընդհանուրի մեջ:	(77%) 50%	2030թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակի դրությամբ	2026 թ.- 18,000,000 2027 թ.- 24,000,000 2028 թ.- 26,000,000 2029 թ.- 28,000,000 2030 թ.- 32,000,000	ԿԳՄՄՆ ԲԿԳԿ
1.2.2.	Գ1.2.2. Գլոբալ գիտափորձերում ՀՀ	Հետազոտությունների տարբեր բնագավառներում բացահայտված են գլոբալ նշանակության	(1) 10	2027-2030 թթ. նոյեմբերի 3-րդ	168,750,000	ԿԳՄՄՆ ԲԿԳԿ

	հետազոտողների ներգրավվածության ընդլայնում և ամրապնդում	գիտափորձերը և դրանց ինստիտուցիոնալ մասնակցության համար հատկացվում են անդամավճարներ, ինչպես նաև մասնակիցների գործուղումների համար առանձնացված են համապատասխան միջոցներ: Յուրաքանչյուր գիտափորձի շրջանակում 5 մասնակիցներից առնվազն 3-ը պետք է լինեն երիտասարդ հետազոտողներ՝ ռոտացիոն սկզբունքով: ՀՀ մասնակցած գլոբալ գիտափորձերի քանակությունը:	2027 թ.-3 2028 թ.-5 2029 թ.-7 2030 թ.-10	տասնօրյակ	263,250,000 355,500,000 456,750,000	
1.2.3.	Գ1.2.3. Երկպետական համագործակցությունների աշխարհագրության ընդլայնում	Տարբեր պետությունների հետ միջգերատեսչական համաձայնագրերի շրջանակներում իրականացվում են հետազոտողների փոխանակման և նախնական հետազոտությունների իրականացման ծրագրեր: Երկպետական ծրագրերի իրականացման «Գլոբալ Գիտական Հայաստան» ձևաչափի հայեցակարգի նպատակահարմարության քննարկում և մշակում: Ակտիվ համաձայնագրերի քանակը:	(5) 10	2026-2030թթ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ	800,000,000	ԿԳՄՄՆ ԲԿԳԿ
1.2.4.	Գ1.2.4. Երկպետական հիմնադրամների կամ ֆոնդերի ստեղծում	Հետազոտությունների և մշակումների ոլորտում գլոբալ առաջատար պետությունների հետ միջպետական համաձայնագրերի շրջանակներում երկպետական հետազոտական և ինովացիոն հիմնադրամների կամ ֆոնդերի ստեղծում: Երկպետական հիմնադրամները կամ ֆոնդերը ստեղծված են:	(0) 2	2026-2030 թթ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ	Ըստ բանակցությունների արդյունքների	ԿԳՄՄՆ ԱԳՆ ԲՏԱՆ
1.3.	ՄԱ1-3 *Հայագիտական որակյալ հետազոտություններ* **Վերջնական արդյունք՝** Հայագիտություն և հումանիտար գիտություններ բնագավառում միջազգային ինդեքսավորվող պարբերականներում հրապարակումների թիվը 2026-2030 թվականների համար կազմում է առնվազն 1500: Հայագիտական առնվազն 5 պարբերական ինդեքսավորվում է Վեբ օֆ Սայնս (Web of Science) կամ Սկոպուս (Scopus) ինդեքսավորող համակարգերում: Արտերկրի առաջատար հումանիտար հետազոտությունների կենտրոնների հետազոտողների հետ իրականացվող համատեղ հետազոտական ծրագրերի թիվը ավելի է 30-ից: Հայագիտության ոլորտում միջգիտակարգային հետազոտությունների մասնաբաժինը Հայագիտական հետազոտությունների մեջ կազմում է 50%:					
1.3.1.	Գ1.3.1. Միջազգային հրապարակումների ակտիվացում	Հայագիտական հետազոտություններով զբաղվող գիտաշխատողների համար կազմակերպվել է ակադեմիական անգլերենի իմացության բարելավման ծրագրեր: Ներդրվել է միջազգային	(458) >1500	2026-2030թթ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջում	ԿԳՄՄՆ ԲԿԳԿ

		հրապարակումների խրախուսման ծրագիր՝ որոշակի սահմանված պարբերականների ցանկերում հրապարակումների համար: Սկոպուս (Scopus) շտեմարանում ինդեքսավորված պարբերականներում հայագիտության և հումանիտար գիտությունների բնագավառում հրապարակումների քանակը 2026-2030 ժամանակահատվածի համար:				
1.3.2	Գ.1.3.2. Հայագիտական պարբերականների առաջխաղացում	Իրականացվել է հայագիտական բնույթի հետազոտություններ հրապարակող մինչև 6 գիտական պարբերականների ընտրություն և դրանց խմբագրակազմին տրամադրվել է աջակցություն պարբերականների առաջխաղացումը, թվային հրատարակումը, պատշաճ ընթացակարգերի ներդրումը ապահովելու համար՝ պահպանելով հայերենով հրապարակման հնարավորությունը և միևնույն ժամանակ տանելով դրանք դեպի ինդեքսավորում Վեբ օֆ Սայնս (Web of Science) կամ Սկոպուս (Scopus) տեղեկատվական շտեմարաններում: Ընտրված պարբերականների քանակը: Ինդեքսավորվող պարբերականների քանակը:	(0) մինչև 6 (0) 5	2026 թ. հունիսի 3-րդ տասնօրյակ 2030 թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ	99,112,096	ԿԳՄՄՆ ԲԿԳԿ
1.3.3.	Գ1.3.3. Միջգիտակարգային հայագիտություն	Դրամաշնորհային ծրագրերում և հայագիտական հետազոտություններին նվիրված առանձին ծրագրերում միջգիտակարգային հետազոտություններին տրվում է հնարավորություն հավակնելու հավելյալ ֆինանսավորման, ինչպես նաև դրանց գնահատման ժամանակ ստանում են առավելություն: Միջգիտակարգային բնույթի հայագիտական հետազոտական ծրագրերի մասնաբաժինն ընդհանուր խոշոր դրամաշնորհների շրջանակներում իրականացվող հայագիտական ծրագրերի մեջ:	(12.5%) 50%	2030 թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջում	ԿԳՄՄՆ ԲԿԳԿ
1.3.4	Գ1.3.4. Հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական	Իրականացվել է Հայագիտական հետազոտություններն ուսումնասիրող համահայկական հիմնադրամի գործունեության շրջանակի համադրում գործող պետական	(0) 1	2027թ. հոկտեմբերի 2-րդ տասնօրյակ	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջում	ԿԳՄՄՆ ԲԿԳԿ, ԿԳՄՄՆ, ԱԳՆ

	հիմնադրամի վերաիմաստավորում	ծրագրերի հետ, և գնահատվել է ծրագրերի արդյունավետությունը՝ կազմելով հայագիտական հետազոտություններով զբաղվող առաջատար գիտնականների խորհուրդ: Կատարվել է հիմնադրամի գործառույթների և շրջանակի հստակեցում: Հիմնադրամին են վերապահվել ՀՀ կողմից ֆինանսավորվող միջազգային հայագիտական կենտրոնների ֆինանսավորման և կատարողականների մշտադիտարկման գործառույթները: Հաստատված է հիմնադրամի նոր կանոնադրությունը և գործառույթների շրջանակը:				
1.3.5.	Գ1.3.5. Հայագիտության ոլորտի զարգացման ռազմավարության ընդունում	ՀՀ և միջազգային հայագիտական համայնքի ներգրավմամբ մշակված և Կառավարության կողմից ընդունված է հայագիտության ոլորտի զարգացման ռազմավարությունը:	(0) 1	2027 թ. մարտի 3-րդ տասնօրյակ	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջում	ԿԳՄՄՆ ԲԿԳԿ
1.4.	ՄԱ1-4 *Հետազոտությունների արդիականություն* **Վերջնական արդյունք՝** Բազային ֆինանսավորման կարգում հստակեցված է ֆինանսավորման ձևի շրջանակում իրականացվող գիտական ծրագրերի արդիականության և արդյունավետության գնահատման ընթացակարգերը և իրականացված է գնահատման առաջին շրջափուլը՝ այդ թվում միջազգային գործընկերների ներգրավմամբ:					
1.4.1.	Գ1.4.1. Բազային ֆինանսավորման ծրագրերի գնահատում:	Բազային ֆինանսավորման կարգով նախատեսված են գիտական ստորաբաժանումների արդյունավետության գնահատման ընթացակարգեր, ներառյալ փորձագիտական գնահատումը, ըստ որի իրականացված է գիտական ստորաբաժանումների համադրություն ոլորտի առաջադեմ հետազոտական ուղղությունների հետ, ինչպես նաև պետական գերակայությունների և ռազմավարական ուղղությունների նկատմամբ: 1. Ըստ հետազոտությունների բնագավառների գնահատող միջազգային ներգրավվածությամբ հանձնաժողովները ձևավորված են, աշխատակարգը հաստատված է: 2. Գնահատման առաջին դիագնոստիկ շրջափուլն իրականացված է:	1. (0) 6 2. (0) 1 3. (0) 1	1. 2026թ. օգոստոսի 3-րդ տասնօրյակ 2. 2027թ. օգոստոսի 3-րդ տասնօրյակ 3. 2028թ. հունվարի 1-ին տասնօրյակ	1. Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջում 2. 24,000,000 3. Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջում	ԿԳՄՄՆ ԲԿԳԿ, ՀՀ ԳԱԱ

		3. Եզրակացությունների արդյունքներով կարգավորված են բազային ֆինանսավորման չափաբաժինները կամ տրամադրված է համապատասխան խորհրդատվություն:				
2.	ՌՆ-2 Տնտեսական ազդեցության մեծացում					
2.1.	ՄԱ2-1 *Նպաստող միջավայր* **Վերջնական արդյունք՝** Առկա է համալսարաններում մտավոր սեփականության հարցերին վերաբերող ամբողջական շղթան նկարագրող պատշաճ իրավական շրջանակ: Հիմնադրված է ռիսկային նախաձեռնություններում պետական ներդրումների հիմնադրամը, որը ներդրումներ է արել համալսարանական 10 նախաձեռնություններում: Համալսարաններում ստեղծված է գիտելիքի հնարավորինս լայն շրջանառությունը երաշխավորող և հմտությունների փոխանցման մեխանիզմների շրջանակ, որը երաշխավորում է կրթություն-գիտություն-արտադրություն (կրթություն-հետազոտություն-մասնավոր հատված) առավել արդյունավետ փոխգործակցությունը: Վերանայված է մտավոր սեփականության գրանցման և պաշտպանության պետական համակարգը, այն դիտարկելով որպես հետազոտական համակարգի ապրանքայնացման և առևտրայնացման կարևորագույն օղակ: Ներդրված է նաև հանրային/խմբային ներդրումների առցանց համակարգը, որը հնարավորություն է տալիս քաղաքացիներին սեփական նախընտրությամբ դառնալու ստարտափներում ներդրող և փայատեր:				
2.1.1.	Գ2.1.1. Մտավոր սեփականության տնօրինման ներքին ընթացակարգեր	Համալսարաններում և դրանց կազմում գործող գիտական կազմակերպություններում մշակված և ներդրված են ակադեմիական կազմի, ուսանողների կողմից ստեղծված մտավոր սեփականության տնօրինման և տեխնոլոգիաների փոխանցման ներքին ընթացակարգերը՝ ներառյալ հայտնագործողների և կազմակերպությունների մասնակցության չափերը, ինչպես նաև դրանց օգտագործումից, ներդրումից կամ լիցենզավորումից ստացվող եկամուտների տնօրինման կարգը: «Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքի հիման վրա և միջազգային գործընկեր բուհերի հետ համագործակցությամբ մշակված է մտավոր սեփականության տնօրինման ներքին ընթացակարգերի ձևավորման սկզբունքները և օրինակելի ձևը: Լիազոր մարմնի կողմից հաստատված ուղեցույց:	(0) 1	2027թ. ապրիլի 3-րդ տասնօրյակ	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջում	ԿԳՄՄՆ ԲԿԳԿ
2.1.2.	Գ2.1.2. Համալսարանական ինկուբատորների էկոհամակարգ	Խոշորացված համալսարանների և դրանց հետ միավորված գիտական կազմակերպությունների կառուցվածքներում կանոնադրությամբ նախատեսվել են համալսարանական ստարտափների ինկուբատորների գոյության դրույթները, իսկ Ակադեմիական քաղաք ծրագրի	(0) 1	2026թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ 2028թ.	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջում	ԿԳՄՄՆ ԲԿԳԿ / Համալսարաններ

		շրջանակներում նախատեսված է կլաստերների շրջանակներում ինկուբատորների առանձին շենքային պայմաններ՝ կախված կլաստերների առանձնահատկություններից: Խոշորացված համալսարաններում հաստատված են համալսարանական ստարտափների աջակցության ներքին ընթացակարգեր՝ ներառյալ դրանցում համալսարանի ներդրումների չափերը: 1. Լիազոր մարմնի կողմից հաստատված ներքին ընթացակարգերի մշակման ուղեցույց և ցանկ: 2. Առնվազն 4 կլաստերում մշակված և ներդրված ընթացակարգեր: 3. Բուհական ստարտափների քանակ:	(0) 4 (-) 30	հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ 2030թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ		
2.1.3.	Գ2.1.3. Ակադեմիական քաղաքում աքսելերատորի կառուցում	Ակադեմիական քաղաքի տարածքում համալսարանական ինկուբատորների շրջանակներում որոշակի հասունության հասած ստարտափների առաջխաղացման համար համապատասխան ենթակառուցվածքների ստեղծում՝ ներառյալ ֆիզիկական միջավայրը և ընթացակարգերը: 1.Հայեցակարգը և ընթացակարգերը պատրաստ են: 2.Ֆիզիկական միջավայրը պատրաստ է:	(0) 1 (0) 1	2026թ. սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ 2030թ. մարտի 3-րդ տասնօրյակ	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջում	ԿԳՄՄՆ ԲԿԳԿ
2.1.4.	Գ2.1.4. Ռիսկային նախաձեռնություններում պետական ներդրումներ	Մասնավոր հատվածի ներդրողների հետ համատեղ հիմնադրվել է ռիսկային նախաձեռնություններում պետական և մասնավոր ներդրումների հիմնադրամ, որը բացահայտում է ընդլայնվելու կամ զարգանալու մեծ պոտենցիալ ունեցող ստարտափները և դրանցում իրականացնում է ներդրումներ: Որպես այդպիսին կարող է հանդես գալ ՀՀ վարչապետին կից Հայաստանի գիտության և տեխնոլոգիաների զարգացման խորհուրդ որոշմամբ հիմնադրված Նորարարությունների հիմնադրամը: 1. Նորարարությունների հիմնադրամը որպես այդպիսին ներգրավելու հարցը քննարկած է: 2. Հայեցակարգը և ներքին ընթացակարգերը մշակված են գործընկեր Համալսարանների կամ	(0) 1 (0) 1 (0) 1	2026 թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ 2027 թ. սեպտեմբերի 2-րդ տասնօրյակ 2028 թ. մարտի 3-րդ տասնօրյակ 2030 թ. դեկտեմբերի 3-րդ	12,000,000,000	ԿԳՄՄՆ ԲԿԳԿ ԲՏԱՆ ԷՆ

		նմանատիպ նախաձեռնությունների հետ: 3. Ռիսկային նախաձեռնություններում պետական ներդրումների հիմնադրամը ստեղծված է և անձեռնմխելի դրամագլխի գումարը հատկացված է: 4. Համալսարանական առնվազն 10 նախաձեռնություններում իրականացվել է ներդրում:	(0) 10	տասնօրյակ		
2.1.5.	Գ2.1.5. Կրթություն-գիտություն-շուկա կապի ապահովման հմտությունների ձևավորում	1. Համալսարաններում ներդրված են ուսանողների հետազոտական աշխատանքները գիտական կազմակերպություններում իրականացնելու մեխանիզմները: Գիտական կազմակերպություններում հետազոտություններում ներգրավված ուսանողների թիվ: 2. Միևնույն ժամանակ մագիստրոսական և դոկտորական կրթության մակարդակներում ներդրված են գիտության առևտրայնացման վերաբերյալ ակադեմիական մոդուլների կամ դասընթացներ: Ներդրված մոդուլ: 3. Ներդրված է ուսանողների աշխատանքային փորձառությունը ոլորտի մասնավոր կազմակերպություններում կազմակերպելու ընթացակարգերը: Մասնավոր կազմակերպություններում աշխատանքային փորձառություն անցնող ուսանողների թիվ:	(-) 100 (0) 1 (-) 150	1-3. 2028 թ. սեպտեմբերի 1-ին տասնօրյակ	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջում	ԿԳՄՄՆ ԲԿԳԿ ՀՀ ԲՏԱՆ
2.1.6.	Գ2.1.6. Մտավոր սեփականության պաշտպանության պետական համակարգի բարելավում	Մտավոր սեփականության գրանցման և պաշտպանության պետական համակարգը գործում է միջազգային համադրելի ընթացակարգերով և հանդիսանում է գիտության, նորարարության և մասնավոր հատվածում հետազոտությունների առևտրայնացման ենթակա արդյունքների պաշտպանության նախընտրելի և վստահված գործիք: 1. Մտավոր սեփականության գրանցման և պաշտպանության պետական համակարգի բարելավման համատեքստում մշակվել է արտոնագրերի մասնագիտական	1. (0) 1 2. (-) 3 3. (0) 1	2026 թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ 2027 թ. սեպտեմբերի 1-ին տասնօրյակ	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջում 20,000,000	ԿԳՄՄՆ ԲԿԳԿ ՀՀ ԷՆ Միջազգա-յին գործըն-կեր բուհեր և կազմա-կերպու-թյուններ

		փորձաքննությունը Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեին կամ մասնագիտական այլ կառույցի փոխանցելու հարցը: Ճանապարհային քարտեզը և իրականացման ժամանակացույցը հաստատված է: 2. Մշակվել և ներդրվել են մտավոր սեփականության տնօրինման վերաբերյալ տարբեր կրթական մակարդակների մոդուլներ կամ դասընթացներ: Դասընթացները մշակված են բարձրագույն կրթության բոլոր մակարդակների համար: 3. Ներդրված է պետական խրախուսման գործիքակազմ՝ մասնավոր կազմակերպությունների կողմից մտավոր սեփականության գրանցման խրախուսման նպատակով: Ծրագրի փաթեթը մշակված և հայտարարված է լիազոր մարմնի կողմից և մրցույթը հայտարարված է:		2027 թ. հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ	2027-2030 350,000,000	
2.1.7.	Գ2.1.7. Ստարտափների մեջ հանրային/խմբային ներդրումների արդյունավետ համակարգի գործարկում	1. Ուսումնասիրվել են ստարտափներում փայաբաժիններով հանրային ներդրումների վստահելի հարթակի (equity crowdfunding platform) ստեղծման տարբերակները, այդ թվում գոյություն ունեցող հարթակների միջոցով՝ ՊՄԳ եղանակով: Հարթակի գործարկման հայեցակարգը հաստատված է կառավարության կողմից: 2. Հարթակը գործարկված է, և հարթակի միջոցով կատարված են ներդրումներ:	1. (-) 1 2. (-) 200	2026 թ. հոկտեմբերի 1-ին տասնօրյակ 2027-2030 թթ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջում	ԿԳՄՄՆ ԲԿԳԿ, ՀՀ ԿԲ, ԲՏԱՆ
2.2.	ՄԱ2-2 *Լուծումների միտված հետազոտություններ, պետական պատվերի բավարարում* **Վերջնական արդյունք՝** Պատրաստության ամենաբարձր մակարդակ ունեցող գերակայությունների ուղղությամբ միջոլորտային մասնագիտական խմբերի կողմից մշակվել և հաստատվել է միջոցառումների համալիր 2 ծրագիր: Գերակայությունների ուղղությամբ իրականացվում են հետազոտական առնվազն 10 խոշոր ծրագրեր, որոնց մշտադիտարկման համար ներդրված է մասնակցային մեխանիզմ՝ գիտական և բնագավառներին համապատասխան մասնավոր կազմակերպությունների կողմից: Ներդրված է գերակայությունների ուղղություններով գիտություն-բիզնես երկխոսության հարթակ, որի շրջանակներում կազմակերպվում են մասնագիտացված ձևով ուղեկցվող համաժողովներ կամ ոչ ֆորմալ քննարկումներ՝ հետազոտությունների և գործարար ոլորտների փոխադարձ վստահության, ինչպես նաև ընկալման ու շփման շրջանակի ձևավորման համար: Հղկված է պետական պատվերի ձևակերպման ընթացակարգը, ներառյալ խնդրի դրվածքի, ակնկալվող վերջնարդյունքների և դրանց տնօրինման ձևաչափի և վերանայված է նպատակային հետազոտությունների տրամադրման մեխանիզմն ու տրամաբանությունը՝ հնարավորինս նվազեցնելով խնդրի վերջնական ձևակերպումից մինչև լուծման				

	աշխատանքների մեկնարկն ընկած ժամանակահատվածը:					
2.2.1.	Գ2.2.1. Ներդրումներ գիտության և տեխնիկայի գերակայությունների ուղղություններով	1. Առավել բարձր պատրաստության մակարդակ ունեցող գերակայությունների ուղղությամբ ստեղծվել է աշխատանքային խումբ՝ համապատասխան ոլորտների հետազոտողներից, մասնավոր հատվածի կազմակերպությունների ներկայացուցիչներից և համաշխարհային առաջատար հետազոտողներից՝ որոնց օգնությամբ կազմվել է գերակայության ուղղությամբ ՀՀ մրցունակությունն ապահովելու համար միջոցառումների ծրագիրը, որը ներառում է ամբողջ շղթայում միջոցառումների համապատասխան պլան և ներդրումների ծրագիր: Միջոցառումների ծրագիրը պատրաստ է: 2. Գերակայությունների ուղղությամբ համալիր ծրագրերը մեկնարկած են համաձայն միջոցառումների ծրագրի:	(0) 2 (0) 2	1. 2026թ. հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ 2. 2027թ. փետրվարի 2-րդ տասնօրյակ	4,000,000,000	ԿԳՄՄՆ ԲԿԳԿ ՀՀ ԲՏԱՆ
2.2.2.	Գ2.2.2. Գիտության և տեխնիկայի գերակայությունների ուղղությամբ աշխատանքային խմբերի ձևավորում	Գիտության և տեխնիկայի ավելի ցածր պատրաստության մակարդակ ունեցող ուղղություններին համապատասխան ձևավորվում են աշխատանքային խմբեր, որոնք քննարկում և մշակում են համապատասխան ուղղությունները ավելի բարձր պատրաստության մակարդակի բերելու նպատակահարմարությունը և առաջարկությունները, ինչպես նաև ավելի ցածր պատրաստության մակարդակում գտնվող գերակայությունների ուղղությամբ ամրապնդմանը և համուղղմանը միտված առաջարկություններ և ծրագրեր և համապատասխանաբար մշակում են միջոցառումների ծրագրեր: Ծրագրերի քանակ:	(0) 10	2027թ. հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջում	ԿԳՄՄՆ ԲԿԳԿ ՀՀ ԲՏԱՆ
2.2.3.	Գ2.2.3. Գերակայությունների ուղղություններով	Հեռանկարային ուղղություններով հետազոտական նախագծերի մրցույթի տրամաբանությունը և հատկացվող	(27) 2027 թ. -25 2028 թ. -50	2027-2030 թթ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ	2027 - 875,000,000 2028-	ԿԳՄՄՆ ԲԿԳԿ

	հետազոտական ծրագրեր	ֆինանսավորման ծավալները վերանայված են, ուղղելով գերակայությունների ուղղություններով հետազոտական ծրագրերի ֆինանսավորմանը: Ընթացիկ և իրականացված ծրագրերի քանակ:	2029 թ. -75 2030 թ. -100		1,750,000,000 2029- 2,625,000,000 2030- 3,500,000,000	
2.2.4.	Գ2.2.4. Գերակա ուղղություններին համապատասխանող և անհրաժեշտ կրթական ծրագրերի բովանդակային վերանայման ծրագիր	Բուհերի դրամաշնորհային ֆինանսավորման շրջանակներում, համապատասխան ոլորտների հետազոտողների, մասնավոր հատվածի ներկայացուցիչների և կրթական ծրագրերի ղեկավարների հետ յուրաքանչյուր ծրագրի համար առաջատար համալսարաններից հետազոտողների ներգրավմամբ ծրագրերի կամ ակադեմիական մոդուլների բովանդակության վերանայում և դասավանդման ձևաչափերի մշակում և ակադեմիական կազմի վերապատրաստումներ: Ծրագրերը ներառում են միկրո-որակավորման ծրագրեր, շարժունության ձևաչափեր և առաջադեմ հետազոտությունների արդյունքների վրա հիմնված դասավանդում, հրավիրյալ դասախոսների ներգրավում: Վերանայված կրթական ծրագրերի և ակադեմիական մոդուլների քանակ:	(-) 2027 թ. -5 2028 թ. -10 2029 թ. -20 2030 թ. -50	2027-2030թթ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ	2027- 100,000,000 2028- 200,000,000 2029- 400,000,000 2030- 1,000,000,000	ԿԳՄՄՆ ԲԿԳԿ
2.2.5.	Գ2.2.5. Գիտություն-գործարարություն երկխոսություն	Գերակա ուղղություններից յուրաքանչյուրի համար կազմակերպվում են պարբերական գիտաժողովներ, որոնց մասնակցում են ոլորտի առաջատար հետազոտող խմբերը և մասնավոր կազմակերպությունները, որի ընթացքում փոխադարձաբար ներկայացվում են հետաքրքրությունների շրջանակը և դրվում են հնարավոր համագործակցությունների հիմքերը: Գիտաժողովի կազմակերպման մեթոդաբանությունը նախապես մշակվում է և գիտաժողովը կազմակերպվում ու մոդերացվում է այնպես, որ առավելագույնս հաղթահարվեն միջոլորտային կոմունիկացիոն տարբերությունները կամ առանձնահատկությունները: Կազմակերպված գիտաժողովների թիվ:	(0) 12	2028թ. սեպտեմբերի 1-ին տասնօրյակ	240,000,000	ԿԳՄՄՆ ԲԿԳԿ

2.2.6.	Գ2.2.6. Պետական պատվերի ձևակերպում և հետազոտությունների իրականացում	Վերլուծված են տարբեր պետական գերատեսչությունների կողմից հետազոտական բնույթի աշխատանքներ պատվիրելու ընթացակարգերը, դրանց ձևակերպման, կազմակերպման ու ընդունման գործընթացները: Վերլուծության հիման վրա վերանայվել է նպատակային ձևով հետազոտությունների ֆինանսավորման կարգը՝ լրացվելով խնդիրների վերանայման և ֆինանսավորման նոր մեխանիզմներով՝ ապահովելով հայտարարելուց մինչև իրականացման սկիզբը ընկած ժամանակահատվածի կրճատում՝ հնարավորություն ստեղծելով ֆինանսական տարվա ընթացքում կազմակերպելու ամփոփված խնդիրների իրականացման մեկնարկը, ինչպես նաև հնարավորություն ստեղծելով մասնավոր հետազոտական կազմակերպությունների մասնակցության համար: 1) Պետական գերատեսչությունների կողմից պատվիրվող հետազոտական աշխատանքների տեսակները և դրանց ընթացակարգերը վերլուծված և ամփոփված են զեկույցում: 2) Նպատակային ֆինանսավորման կարգը վերանայված է, պետական պատվերի իրականացման համար նպատակային ֆինանսավորման ծավալները ավելացել են:	1) (0) 1 2) (0) 1	2027թ. մարտի 3-րդ տասնօրյակ 2028թ. հունվարի 1-ին տասնօրյակ	2028-610,000,000 2029-915,000,000 2030-1,220,000,000	ԿԳՄՄՆ ԲԿԳԿ Գերատեսչություններ
2.2.7.	Գ2.2.7. Արդյունավետ գերատեսչական հետազոտական կազմակերպություններ	Իրականացվել է պետական գերատեսչությունների ենթակայությամբ գործող հետազոտական կազմակերպությունների գույքագրում և վերլուծություն (այդ թվում միջազգային փորձագետների ներգրավմամբ)՝ դրված խնդիրների ծավալի, ներգրավված հետազոտական ներուժի, ֆինանսավորման ծավալների ու իրականացված հետազոտությունների որակի համադրությամբ, ինչի արդյունքում կազմվել է գերատեսչական հետազոտական կազմակերպությունների արդյունավետության բարձրացման զեկույց և	1)(0) 1 2) գործընթացը մեկնարկել է	1) 2027թ. սեպտեմբերի 1-ին տասնօրյակ 2) 2030թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ	1) 24,000,000 դրամ 2) Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջում	ԿԳՄՄՆ ԲԿԳԿ Գերատեսչություններ

		օպտիմալացման ճանապարհային քարտեզ, որի հիման վրա՝ հաշվի առնելով հանրային հատվածում հետազոտական համակարգի կոնսոլիդացման գործընթացը և ակադեմիական քաղաք ծրագրի տրամաբանությունը՝ իրականացվել է նշյալ կազմակերպությունների օպտիմալացում: 1) Զեկույցը պատրաստ է: 2) Կազմակերպությունների օպտիմալացումը սկսված է:				
2.3.	ՄԱ2-3 *Պաշտպանական և երկակի նշանակության հետազոտություններ* **Վերջնական արդյունք՝** Պաշտպանական ոլորտի ՀԵՄ ծրագրերի համար հատկացվող պետական ֆինանսավորման կատարողականը բարձրացել է մինչև առնվազն 80%: Վերանայված են պաշտպանական ՀԵՄ ծրագրերի կազմակերպման ընթացակարգերն ըստ տեխնոլոգիաների պատրաստվածության մակարդակի: Ներդրված է ծրագրերի ղեկավարի ինստիտուտը, որը պատասխանատու է թեմատիկ շրջանակում իրականացվող ներդրումների համուղղմամբ և աշխատանքների կոմպլեմենտարության մեծացման համար: Ներդրված է նաև ոլորտում ներգրավված մասնագետների որակավորման բարձրացման ծրագիրը:					
2.3.1.	Գ2.3.1. Պաշտպանական նշանակության ՀԵՄ ոլորտում իրականացվող ծրագրերի արդյունավետություն	Պաշտպանական նշանակության ՀԵՄ ոլորտում իրականացվող ֆինանսավորման ծրագրերի տրամաբանությունը և ընթացակարգերը վերանայված են՝ ըստ տեխնոլոգիաների պատրաստվածության մակարդակների կազմակերպելով առանձին մրցույթներ և ապահովելով յուրաքանչյուր տեսակի մրցույթներից ակնկալվող արդյունքների հավաստման առանձին ընթացակարգեր: Հաստատված ընթացակարգեր ըստ ՏՊՄ-ների խմբերի:	(1) 3	2027 թ. հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջում	ԲՏԱՆ ՌԱԿ ԿԳՄՄՆ ԲԿԳԿ
2.3.2.	Գ2.3.2. Թեմատիկ խմբերի ինստիտուցիոնալ համակարգող ծրագրի ղեկավարներ	Պաշտպանական հետազոտական ծրագրերի թեմատիկ խմբերի ինստիտուցիոնալ համակարգման համար ծրագրի ղեկավարի գործառույթների ներդրում, որի շրջանակներում ոլորտային մեծ փորձառություն ունեցող մասնագետի կողմից կիրականացվի թեմատիկ ընդհանրություն ունեցող ֆինանսավորվող ծրագրերի գիտամեթոդական համակարգում՝ արդյունքների հնարավորինս մեծ համադրելիություն ապահովելու և արդյունքների	(0) 5	2028թ. հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ	60,000,000	ԲՏԱՆ ՌԱԿ ԿԳՄՄՆ ԲԿԳԿ

		կոմպլեմենտարությունը երաշխավորելու համար, միևնույն ժամանակ դիտարկելով հնարավոր կարիքները և ներկայացնելով հետազոտությունների և մշակումների թեմատիկ առաջնահերթություններ: Նշանակված ծրագրերի ղեկավարներ:				
2.3.3.	Գ2.3.3. Երկակի նշանակության հետազոտական ծրագրերի արդյունավետության բարձրացում	Երկակի նշանակության հետազոտական ծրագրերի տրամաբանությունը վերանայված է՝ ներառելով հանրային հատվածի հետազոտական կազմակերպությունների հետ համագործակցությամբ պաշտպանական նշանակության մշակումները քաղաքացիական կիրառությունների դաշտ բերելը, ինչի հաջողությունը կբերի համապատասխան կազմակերպությունների համար կայունության հավելյալ աղբյուրներ և միևնույն ժամանակ արժեքավոր մշակումների ավելի լայն կիրառություններ: Վերանայված ծրագիր:	(1) 1	2027թ. հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջում	ԿԳՄՄՆ ԲԿԳԿ
2.4.	ՄԱ2-4 *Մասնավոր հատվածում հետազոտությունների և մշակումների խթանում* **Վերջնական արդյունք՝** բուհերում կամ գիտական կազմակերպություններում որակավորման բարձրացման ծրագրերով կամ մոդուլներով վերապատրաստվող կամ վերապատրաստված մասնավոր հատվածի աշխատողների քանակը 2030 թվականի դրությամբ ավելի է 100-ից: Մշակված է մասնավոր հատվածում ՀևՄ աշխատանքների խթանմանը միտված ՀՀ քաղաքականությունների տեղեկանքը և ներդրված են այդ աշխատանքների խթանման նոր գործիքներ և այդ գործիքների արդյունավետության գնահատման մեխանիզմներ: Կազմված է պետական աջակցության ծրագրերից օգտվող ՀևՄ աշխատանքներ անող կազմակերպությունների ռեգիստր և վարվում է այդ կազմակերպությունների վիճակագրական վերլուծություններ և մշտադիտարկում: ՀևՄ ոլորտում մասնավոր հատվածի ներդրումները կազմում են առնվազն ՀՆԱ 0.25% 2030 թվականի դրությամբ				
2.4.1.	Գ2.4.1. Մասնավոր հատվածի աշխատակիցների վերապատրաստման հնարավորություններ	Ներդրված են համալսարաններում և գիտական կազմակերպություններում մասնավոր հատվածի աշխատակիցների վերապատրաստման ընթացակարգերը՝ միկրո-որակավորման կամ դասընթացների միջոցով, որոնք ներառում են նաև ժամանակակից սարքավորումների վրա աշխատանքի հմտությունների ձեռք բերման, առաջադեմ ուղղություններում գիտելիքների համալրման կամ հետազոտական հմտությունների ձեռքբերման ծրագրեր: Համալսարաններում և գիտական կազմակերպություններում վերապատրաստված	(-) 100	2028-2030 թթ. սեպտեմբերի 1-ին տասնօրյակ	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջում	ԿԳՄՄՆ ԲԿԳԿ ՀՀ ԲՏԱՆ

		աշխատակիցների թիվ:				
2.4.2.	Գ2.4.2. Մասնավոր հատվածում ՀևՄ աշխատանքների խթանման ծրագրեր	1. Վերանայված են մասնավոր հատվածում ՀևՄ աշխատանքների խրախուսման պետական ծրագրերի արդյունավետությունը ու թերությունները, ինչպես նաև ուսումնասիրված են առաջադեմ երկրներում մասնավոր հատվածներում իրականացվող ՀևՄ աշխատանքների պետական խթանման ծրագրերը և ներկայացված են առաջարկություններ: Վերլուծության և առաջարկությունների փաստաթուղթ: 2. Հարկային արտոնությունների փոխարեն, նպատակահարմարության դեպքում ներմուծված են ՀևՄ աշխատանքների խթանման, ինչպես նաև առաջընթացին միտված աջակցության ծրագրեր՝ որոնք ներառում են նաև հանրային հատվածի կազմակերպությունների հետ համագործակցային ցանցերի ձևավորումը: Վերանայված կամ նոր պետական ծրագրերի քանակ:	(0) 1 (1) 2	1. 2027թ. ապրիլի 3-րդ տասնօրյակ 2. 2028 թ. հունվարի 3-րդ տասնօրյակ	48,000,000 ըստ ծրագրերի	ՀՀ ԲՏԱՆ ԿԳՄՄՆ ԲԿԳԿ
2.4.3.	Գ2.4.3. ՀևՄ գործունեություն իրականացնող մասնավոր կազմակերպությունների միասնական ռեգիստր	ԲԿԳԿ private.hesc.am տիրույթում վարվում է ՀևՄ գործունեություն ծավալող մասնավոր կազմակերպությունների ռեգիստրը՝ ներառյալ կազմակերպությունների կողմից ՀևՄ աշխատանքներում ներգրավված մարդկային ներուժի վիճակագրությունը և կազմակերպությունների կողմից ՀևՄ ուղղությամբ ներդրված միջոցների և ֆինանսավորման ծավալների և ծագման մասին վիճակագրությունը: Համակարգը ամբողջովին աշխատում է և կարողանում է հաշվառել և տրամադրել պահանջվող վիճակագրական տվյալները:	1	2027թ. սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջում	ԿԳՄՄՆ ԲԿԳԿ
2.4.4.	Գ2.4.4. Մասնավորի հետ համալսարանների համագործակցության մակարդակ	Համալսարանների և գիտական կազմակերպությունների ու համապատասխան ոլորտների մասնավոր կազմակերպությունների հետ համատեղ իրականացվում են համատեղ հետազոտական ծրագրեր՝ մասնավորի ներդրմամբ կամ պատվերով:	1. (25) 300 2. (-)	2026-2030 թթ. սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ	2026 750,000,000 2027 900,000,000 2028 1,500,000,000	ԿԳՄՄՆ ԲԿԳԿ ԲՏԱՆ

		1. ծրագիրն իրականացվում է ԲԿԳԿ փորձարարական մշակումների և երկակի նշանակության ծրագրերի շրջանակներում՝ ֆինանսավորման երաշխավորված ծրագրերի քանակ: 2. ամբողջովին մասնավորի պատվերով բուհերում իրականացվող հետազոտական ծրագրերի քանակ: 3. Մասնավոր-հանրային համահեղինակությամբ հոդվածների քանակ:	20 3. (-) 200		2029 2,100,000,000 2030 3,750,000,000	
2.4.5.	Գ2.4.5. Մասնավոր – բուհ համագործակցությամբ հետազոտական նախագծերի իրականացում	Համալսարանների և մասնավոր հատվածի ներկայացուցիչների հետ ձևավորված են համատեղ խորհուրդներ, որոնք վեր են հանում մասնավոր հատվածում առկա խնդիրներ, որոնց շուրջ կազմակերպվում են ուսանողական հետազոտական ծրագրերը:	(-) 50	2026-2030թթ. սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջում	ԿԳՄՄՆ ԲԿԳԿ, ԲՏԱՆ
2.4.6.	Գ.2.4.6. Մասնավոր հատվածում գիտական հրապարակումների խթանում:	Գործարկվել է մասնավոր հատվածի հետազոտական կազմակերպությունների կողմից գիտական հեղինակավոր պարբերականներում, ինչպես նաև սահմանված կարգով բարձրորակ աշխատանքների հրապարակման պետական աջակցության մեխանիզմը: Խրախուսված գիտական հրապարակումների քանակ:	(0) 100	2026-2030 թթ. Դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ	100,000,000	ԿԳՄՄՆ ԲԿԳԿ, ԲՏԱՆ
3.	ՌՆ-3 Սոցիալական պատասխանատվության բարձրացում					
3.1.	ՄԱ3-1*Գիտության հանրայնացում և հանրային ներգրավվածություն* **Վերջնական արդյունք՝** 2030 թվականին բոլոր հանրային գիտական կազմակերպությունները իրականացնում են քաղաքացիների ընդունելություն՝ բաց դռների օրեր կամ գիտության գիշերներ կամ այլ ձևաչափերով՝ ապահովելով մասնագիտական ուղեկցմամբ ծանոթացում գիտական ենթակառուցվածքների և իրականացվող հետազոտությունների հետ: Միջազգային լավագույն փորձի ուսումնասիրությամբ հիմնադրված է գիտության թանգարան: Հանրային մեդիա դաշտում ներդրված է առնվազն մեկ գիտահանրամատչելի էլեկտրոնային պարբերական, որն ապահովում է ինչպես ՀՀ հեղինակների նյութերի հրապարակում, այնպես էլ միջազգային լավագույն գիտահանրամատչելի պարբերականներից ընտրված նյութերի մասնագիտական թարգմանություններով հրապարակումներ: Միջազգային գործընկերների հետ համագործակցությամբ ներդրված է գիտական լրատվության ակադեմիական մոդուլը, որը նաև դասավանդվում է որպես լրացուցիչ կրթության մոդուլ: Սոցիալական ցանցերում առկա են գիտական ուղղվածության առնվազն 3 բովանդակություն ստեղծողներ, որոնք ապահովում են բարձրորակ հաղորդակցություն, ինչպես նաև առկա է սոցիալական մեդիա տիրույթում հայտնի բովանդակությունների թարգմանություն և տարածում: Թարգմանված է առնվազն 10 անուն գիտական ֆանտաստիկայի ժանրի համաշխարհային հայտնի գրական ստեղծագործություններ և կազմակերպվել է գիտական ֆանտաստիկայի ժանրում ստեղծագործելուն նվիրված մրցույթ, կամ իրականացվում է այդ մրցույթին աջակցություն:					
3.1.1.	Գ3.1.1. Հանրային	Գիտական կազմակերպություններում ներդրված է	(0)	2026-2028թթ.	Լրացուցիչ	ԿԳՄՄՆ

	ներգրավման ծրագրեր գիտական կազմակերպություններում	քաղաքացիների այցելությունների կազմակերպման համակարգ, որոնց ընթացքում կազմակերպվում են այցելություններ գիտական կազմակերպության լաբորատորիաներ, ներկայացվում է կազմակերպության աշխատանքը, կազմակերպում են հանրամատչելի գիտական միջոցառումներ, ցուցադրություններ, դիտումներ կամ այլ ոլորտին հատուկ միջոցառումներ, որոնք միտված են հանրային իրազեկվածության բարձրացմանը և աշակերտների մոտ հետաքրքրության բարձրացմանը: 1. Ակտիվ միջոցառումների քանակ: 2. Միջոցառումներին մասնակցած քաղաքացիների քանակ:	10 (0) >500	հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ 2027-2029թթ. դեկտեմբերի 1-ին տասնօրյակ	ֆինանսավորում չի պահանջում	ԲԿԳԿ
3.1.2.	Գ3.1.2. Գիտահանրամատչելի պարբերականի հրապարակում	Պետական ֆինանսավորմամբ հրապարակվող 2 գիտահանրամատչելի պարբերականների ֆինանսավորումը ուղղված է նոր, ամբողջությամբ էլեկտրոնային գիտահանրամատչելի պարբերականի հրապարակմանը, որը բացի լոկալ տեղեկատվությունից՝ համապատասխան համաձայնագրերի հիման վրա տպագրում է նաև աշխարհի առաջատար գիտահանրամատչելի պարբերականների առավել հետաքրքրական նյութերի բարձրորակ թարգմանությունները: Հրապարակվող գիտահանրամատչելի էլեկտրոնային պարբերական:	(2) 1	2027թ. հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջում	ԿԳՄՄՆ ԲԿԳԿ ՀՀ ԳԱԱ
3.1.3.	Գ3.1.3. Գիտական լրատվության ակադեմիական մոդուլ	Միջազգային գործընկերների հետ համատեղ մշակված և ներդրված է գիտական լրատվության ակադեմիական մոդուլը, ոչ միայն ժուռնալիստիկայի մասնագիտական ծրագրի համար, այլ նաև ԲՏՃՄ մասնագիտություններում՝ որպես կամընտրական մոդուլ: Մշակված ակադեմիական մոդուլ:	(0) 1	2028թ. սեպտեմբերի 2-րդ տասնօրյակ	20,000,000	ԿԳՄՄՆ ԲԿԳԿ
3.1.4.	Գ3.1.4. Գիտությունը սոցիալական մեդիա դաշտում	1. Գիտական համայնքի ներկայացուցիչներից սոցիալական մեդիա հարթակներում որոշակի ակտիվություն ցուցաբերող անհատների խրախուսում և առաջխաղացմանը նպաստող	(0) 3	2027-2029թթ. սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ	60,000,000	ԿԳՄՄՆ ԲԿԳԿ

		միջոցառումներ՝ որակյալ բովանդակության ստեղծման և հասանելիության շրջանակի մեծացման համար: Բովանդակություն ստեղծողների քանակը: 2. Միջազգային հայտնի բովանդակություն ստեղծողների նյութերի որակյալ թարգմանության և տարածման իրավունքի ձեռքբերում: Թարգմանվող ալիքների քանակը:	(0) 3			
3.1.5.	Գ3.1.5. Գիտաֆանտաստիկ ստեղծագործությունների թարգմանություն	Ձևավորված հանձնաժողովի կողմից ընտրվել են գիտական ֆանտաստիկայի ժանրի ներկայիս լավագույն ստեղծագործություններից 10-ը, որոնց համար կազմակերպվել է բարձրորակ թարգմանության մրցույթ: Թարգմանված և հրատարակված գրքերի քանակ յուրաքանչյուրը 5000 օրինակից:	(-) 10	2027-2030թթ. դեկտեմբերի 1-ին տասնօրյակ	280,000,000	ԿԳՄՄՆ ԲԿԳԿ
3.1.6.	Գ3.1.6. Գիտական ֆանտաստիկայի ժանրում ստեղծագործելու խթանում	Կազմակերպվել է երիտասարդների կամ սկսնակ ստեղծագործողների կողմից գիտական ֆանտաստիկայի ժանրում ստեղծագործությունների մրցույթ կամ աջակցություն է ցուցաբերվել արդեն գոյություն ունեցողներին: Լավագույն ստեղծագործություններին հնարավորություն տալով տպագրվելու գիտահանրամատչելի պարբերականում կամ դրա հատուկ համարում: Մրցույթը կազմակերպվել է:	(-) 1	2028թ. դեկտեմբերի 1-ին տասնօրյակ	10,000,000	ԿԳՄՄՆ ԲԿԳԿ
3.1.7.	Գ3.1.7. Քաղաքացիական գիտություն	Քաղաքացիների (ոչ մասնագետ) ներգրավմամբ խոշոր հետազոտական ծրագրերի իրականացում citizen science տրամաբանությամբ, երբ քաղաքացիները մասնակցում են հանրային նշանակություն ունեցող, խոշոր տվյալների հավաքագրման կամ աշխարհագրական լայն բաշխում պահանջող հետազոտություններում: Քաղաքացիական գիտություն սկզբունքով իրականացվող հետազոտությունների քանակը:	(0) 2	2028թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջում	ԿԳՄՄՆ ԲԿԳԿ
3.1.8.	Գ3.1.8. Գիտության հանրայնացման միջոցառումներ	Մասնավոր հատվածի հետ համագործակցությամբ իրականացվում են գիտության հանրայնացման միջոցառումներ (գիտության շաբաթ, բաց դասախոսություններ,	(2) 3	2026-2030 թթ. նոյեմբերի 2-րդ տասնօրյակ	2026 – 10,000,000 2027 - 10,000,000	ԿԳՄՄՆ ԲԿԳԿ ԲՏԱՆ Մասնավոր

		հանրային քննարկումներ և այլ ֆորմատներ): Կազմակերպվող ծրագրերի տեսակներ:			2028 - 20,000,000 2029 - 30,000,000 2030 - 30,000,000	հատված
3.2.	ՄԱ3-2*Գիտությունից դպրոց* **Վերջնական արդյունք՝** Առնվազն ԲՏՃՄ առարկաների ուղղությամբ համապատասխան գիտական կազմակերպություններում կազմակերպվում են առարկայական օլիմպիադաների խմբակների աշխատանքները՝ սկսած հեռավար կամ առցանց տարաժամանակյա եղանակով հնարավորինս լայն ընդգրկում ապահովող խմբակների վարմամբ մինչև հանրապետությունը ներկայացնող թիմի պարապմունքների կազմակերպմամբ: Համապատասխան գիտական կազմակերպություններում առնվազն ԲՏՃՄ մասնագիտությունների ուղղությամբ կազմակերպվում են առարկաների ուսուցիչների մասնագիտական վերապատրաստումներ՝ տարբեր ձևաչափերի կիրառմամբ: Ձևակերպվել է հետազոտող դպրոցների հայեցակարգը, որի շրջանակներում կազմակերպվում է դպրոցների ընտրություն, որոնց աշակերտները կմասնակցեն տարբեր հետազոտությունների: Միջազգային հետազոտական ծրագրերին մասնակցում է առնվազն 20 դպրոց:				
3.2.1.	Գ3.2.1. Օլիմպիական խմբակներ գիտական կազմակերպություններում	Առարկայական աշակերտական օլիմպիադաների առնվազն ԲՏՃՄ ուղղություններով խմբակների կազմակերպում համապատասխան ուղղվածության գիտական կազմակերպություններում՝ ապահովելով հետաքրքրված աշակերտների պատրաստման հնարավորություններ հեռավար և առցանց գործիքների կիրառմամբ: Գիտական կազմակերպություններում կազմակերպվող օլիմպիական խմբակներ:	(1) 7	2028թ. սեպտեմբերի 1-ին տասնօրյակ	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջում	ԿԳՄՄՆ ԲԿԳԿ ԿԳՄՄՆ
3.2.2.	Գ3.2.2. Գիտական կազմակերպությունների ընդգրկմամբ ԲՏՃՄ ուսուցիչների վերապատրաստումներ	Կրթական համալսարանի կողմից համապատասխան ուղղվածության գիտական կազմակերպությունների ներգրավմամբ ԲՏՃՄ ուսուցիչների մասնագիտական վերապատրաստումներ՝ փորձարարական հմտությունների, առարկայի շրջանակում դասավանդման ժամանակակից մեթոդների և համապատասխան գիտակարգերում ժամանակակից ձեռքբերումների վերաբերյալ գիտելիքներով և հմտություններով զինելու նպատակով: Կազմակերպված դասընթացների քանակ, որոնք ապահովում են տարեկան 50 առարկայական ուսուցիչների վերապատրաստում:	(0) 6	2028-2030թթ. հունիսի 2-րդ տասնօրյակ	2028- 150,000,000 2029- 150,000,000 2030- 150,000,000	ԿԳՄՄՆ ԲԿԳԿ ԿԳՄՄՆ

3.2.3.	Գ3.2.3. Հետազոտող դպրոցների ցանց	Գիտության փառատոներին մասնակցելու նպատակով ձևավորվել է հետազոտող դպրոցների ցանց, որի համակարգումն իրականացվում է ՀՀ ԳԱԱ-ի կողմից: Ցանցի դպրոցների աշակերտական խմբերը կցված են գիտական կազմակերպությունների լաբորատորիաների հետ, որտեղ իրականացնում են իրենց հետազոտական թեմաները՝ գիտության փառատոներին մասնակցելու համար: 1. Հետազոտող դպրոցների ցանցի ձևավորման կարգը և աշխատանքի սկզբունքները հաստատված են Լիազոր մարմնի հրամանով: 2. Հետազոտող դպրոցների ցանցում ներգրավված դպրոցների քանակ:	(0) 1 (0) 20	2028-2030 թթ. հունիսի 2-րդ տասնօրյակ	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջում	ԿԳՄՄՆ ԲԿԳԿ ԿԳՄՄՆ ՀՀ ԳԱԱ
3.2.4.	Գ3.2.4. Գլոբալ դպրոցական հետազոտական ցանցերին (GLOBE) մասնակցություն	Առնվազն 20 դպրոց մասնակցում է միջազգային դպրոցական հետազոտական ցանցի (GLOBE) աշխատանքներին:	(-) 20	2026-2030թթ. Հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջում	ԿԳՄՄՆ ԲԿԳԿ ԿԳՄՄՆ ՀՀ ԳԱԱ
3.3.	ՄԱ3-3 *Ներառականություն, հավասար հնարավորություններ, անվտանգություն* **Վերջնական արդյունք՝** Իրականացվել է ոլորտի ղեկավար պաշտոններ զբաղեցնող անձանց ատեստավորում: Մասնագիտական համայնքի հետ մշակվել են և ոլորտի լիազոր մարմնի կողմից հաստատվել են խտրականության բացառման և խտրականության դեպքերի քննման ներքին ընթացակարգերի օրինակելի ձևերը, որոնց հիման վրա ներդրված են ներքին իրավական շրջանակները: Ակադեմիական քաղաք ծրագրի շրջանակում կառուցված և կառուցվելիք ենթակառուցվածքների համար ներդրված են համապատասխան ֆիզիկական հարմարեցումները և ապահովության ու անվտանգության ենթակառուցվածքները:					
3.3.1.	Գ3.3.1. Գիտական ղեկավար պաշտոններ զբաղեցնողների ատեստավորում	Համապետական ատեստավորման շրջանակներում իրականացվել է գիտական ղեկավար պաշտոններ զբաղեցնող անձանց ատեստավորում համաձայն Կառավարության 2023 թվականի հմ. 2298-Ն որոշմամբ սահմանված քանակական և որակական նվազագույն պահանջների համաձայն: 1. Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից մշակված է որակական պահանջների մեկնաբանության ուղեցույցը: 2. Ատեստավորման արդյունքում պաշտոններին անհամապատասխանությամբ նվազած գիտական ղեկավար պաշտոնների քանակը:	(0) 1 (442) <310	2026թ. մարտի 3-րդ տասնօրյակ 2026թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջում	ԿԳՄՄՆ ԲԿԳԿ

3.3.2.	Գ3.3.2. Խտրականության բացառում, հավասար հնարավորություններ և ներառականություն	Լիազոր մարմնի կողմից հաստատվել են գիտական կազմակերպություններում և համալսարաններում խտրականության բացառման և հավասար հնարավորությունների երաշխավորության նպատակով ներքին ընթացակարգերի և խտրականության դեպքերի քննման ներքին ընթացակարգերի օրինակելի ձևերն ու սկզբունքները, որոնց հիման վրա մշակված և հաստատված են կազմակերպությունների ներքին ընթացակարգերը: Մշակված ուղեցույց:	(0) 1	2027 թ. ապրիլի 3-րդ տասնօրյակ	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջում	ԿԳՄՄՆ ԲԿԳԿ
3.3.3.	Գ3.3.3. Անվտանգություն և հասանելիություն	«Ակադեմիական քաղաք» ծրագրի շրջանակներում կառուցվող գիտական ենթակառուցվածքները ունեն համապատասխան հարմարեցումներ՝ սահմանափակումներ ունեցող անձանց հասանելիությունն ապահովելու համար: Ենթակառուցվածքները զինված են ապահովության և անվտանգության ժամանակակից համակարգերով: Անվտանգության և հասանելիության ուղեցույցը պատրաստ է:	(0) 1	2026թ. սեպտեմբերի 1-ին տասնօրյակ	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջում	ԿԳՄՄՆ ԲԿԳԿ
3.3.4.	Գ3.3.4. Գիտության ոլորտում կին ղեկավարների հզորացման ծրագրեր	Վերլուծված է իրականացվող կին ղեկավարների աջակցության ծրագրի արդյունքները և դրա հիման վրա մշակված է մրցութային նոր փաթեթ, որը ապահովում է առաջխաղացման նախադրյալները և ներառում է համապատասխան վերապատրաստումներ: 1. Վերլուծությունը պատրաստ է և տեղադրված է ԲԿԳԿ կայքում: 2. Նոր պայմաններով մրցույթի հրավերի համաձայն մրցույթը հայտարարված է:	1. (0) 1 2.(1) 1	2027 թ. մարտի 1-ին տասնօրյակ 2028 թվականի մարտի 2-րդ տասնօրյակ	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջում	ԿԳՄՄՆ ԲԿԳԿ
3.4.	ՄԱ3-4 *Էթիկա և պատասխանատվություն* **Վերջնական արդյունք՝** լիազոր մարմնի կողմից հաստատված է ակադեմիական էթիկայի, ներառյալ ակադեմիական ազնվության և վարվեցողության սկզբունքները, որը ներառում է նաև պատասխանատվության մեխանիզմների վերաբերյալ ուղեցույց: Դրա հիման վրա գիտական կազմակերպություններն ու բուհերը մշակում և հաստատում են հարցը կարգավորող ներքին իրավական շրջանակը: Հաստատված է նաև հետազոտությունների կազմակերպման էթիկական և անվտանգության սկզբունքների շրջանակը, որի հիման վրա գիտական կազմակերպություններում և բուհերում ներդրված է ներքին իրավական շրջանակը					
3.4.1.	Գ3.4.1. Ակադեմիական	Լիազոր մարմնի կողմից հաստատվել են	0	2027 թ.	Լրացուցիչ	ԿԳՄՄՆ

	էթիկայի սկզբունքներ	գիտական կազմակերպություններում և համալսարաններում ակադեմիական էթիկայի ակադեմիական ազնվության և վարվեցողության սկզբունքների ուղեցույցը, ինչպես նաև դրանց խախտման դեպքերում քննման ներքին ընթացակարգերի օրինակելի ձևերն ու սկզբունքները: Դրանց հիման վրա մշակված և հաստատված են կազմակերպությունների ներքին ընթացակարգերը: Մշակված ուղեցույց:	(1)	ապրիլի 3-րդ տասնօրյակ	ֆինանսավորում չի պահանջում	ԲԿԳԿ
3.4.2.	Գ3.4.2. Հետազոտությունների պատասխանատու և անվտանգ կազմակերպում	Լիազոր մարմնի կողմից հաստատվել են գիտական կազմակերպություններում և համալսարաններում հետազոտությունների կազմակերպման էթիկական ուղեցույցները և պատասխանատու մոտեցումները, ինչպես նաև հետազոտությունների անվտանգ կազմակերպման սկզբունքները: Դրանց հիման վրա մշակված և հաստատված են կազմակերպությունների ներքին ընթացակարգերը: Մշակված ուղեցույց:	0 (1)	2027թ. օգոստոսի 3-րդ տասնօրյակ	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջում	ԿԳՄՄՆ ԲԿԳԿ
3.5.	ՄԱ3-5 *Ներգրավվածություն հանրային քաղաքականությունների մշակման մեջ* **Վերջնական արդյունք՝** Պատվիրատու մարմինների հետ հարցումների արդյունքում իրականացվել է գիտական կազմակերպությունների ներգրավման արդյունքների և դրա մակարդակի վերաբերյալ բավարարվածության վերլուծություն: Վերլուծության արդյունքների հիման վրա խոշորացված գիտական կազմակերպություններում ներդրված են հանրային քաղաքականությունների մշակման նպատակով հետազոտությունների իրականացմանը աջակցելու և արդյունքները պատշաճ հաղորդակցելու մեխանիզմներ, ստանդարտներ և ընթացակարգեր					
3.5.1.	Գ3.5.1. Պետական պատվերի մեխանիզմի հոկում	Պետական գերատեսչություններում հանրային քաղաքականությունների մշակման ժամանակ ներգրավված գիտական կազմակերպությունների և բուհերի կողմից իրականացված պայմանագրային հետազոտությունների վերաբերյալ կատարված են հարցումներ և վեր են հանված համագործակցության վերաբերյալ խնդիրները և առաջարկությունները: Իրականացված հարցումների քանակ:	(0) 12	2026թ. նոյեմբերի 2-րդ տասնօրյակ	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջում	ԿԳՄՄՆ ԲԿԳԿ
3.5.2.	Գ3.5.2. Հանրային քաղաքականությունների մշակման մեջ արդյունավետ ներգրավվելու	Խոշորացված գիտական կազմակերպությունների կանոնադրություններով կամ համալսարանների կառուցվածքում նախատեսված են վարչական կազմի ստորաբաժանումներ կամ	(0) 1	2027թ. հունիսի 3-րդ տասնօրյակ	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջում	ԿԳՄՄՆ ԲԿԳԿ

	մեխանիզմներ	պատասխանատուներ, որոնք կիամակարգեն հանրային քաղաքականությունների մշակման համար կազմակերպությունների կողմից իրականացվող հետազոտական ծրագրերի ընթացքը՝ բարձր որակի, հուսալիության և պատշաճ մակարդակով ու ձևաչափով հաղորդակցման տեսակետներից: Լիազոր մարմնի կողմից հաստատված հայեցակարգ:				
3.6.	ՄԱ3-6 *Պետական կառավարման արդյունավետություն և թափանցիկություն* **Վերջնական արդյունք՝** Պետական մրցութային ծրագրերը կազմակերպվում են ռազմավարության նպատակներին համապատասխան՝ հրավերում ունենալով համապատասխան հղում կամ նշում: Մրցութային փաթեթները և պայմանագրերի ձևերը հնարավորինս ստանդարտացված են և լիարժեքորեն արտացոլում են ֆինանսավորվող ծրագրերի վերջնարդյունքները: Հայտերի և հաշվետվությունների ընդունման էլեկտրոնային հարթակները ունեն ընդհանուր հասանելիության ինտերֆեյս, որտեղ արտացոլվում են յուրաքանչյուր մրցույթի շրջանակներում ֆինանսավորման երաշխավորված ծրագրերը և դրանցից յուրաքանչյուրի վերաբերյալ հանրային հասանելի տեղեկատվություն: Լիազոր մարմնի կողմից հաստատվել է ոլորտում կատարողականի չափանիշները, այդ թվում սույն ռազմավարության ռազմավարական նպատակների և միջոցառումների հիման վրա, կատարողականի չափանիշների հիման վրա կազմակերպությունները ներկայացնում են իրենց միջնաժամկետ ֆինանսավորման հայտերը և արդյունքային ցուցանիշները: Լիազոր մարմնի կողմից հաստատվել է գիտության ոլորտի վերաբերյալ վիճակագրական տվյալների ցանկը և դրանց հավաքագրման մեթոդաբանությունը:				
3.6.1.	Գ3.6.1. Ծրագրերի համուղղում ռազմավարության հետ	Ոլորտում իրականացվող պետական ֆինանսավորման ծրագրերը կազմակերպված են ռազմավարությամբ սահմանված առաջնահերթություններին և նպատակներին համապատասխան՝ հրավերներում ունենալով նշում, թե որ վերաբերելի ռազմավարական նպատակներին և արդյունքներին է միտված ծրագիրը: Վերանայված մրցույթների հրավերներ:	(0) 20	2026-2030թթ.	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջում	ԿԳՄՄՆ ԲԿԳԿ
3.6.2.	Գ3.6.2. Մրցույթի նպատակներին համապատասխան պայմանագրեր	Ֆինանսավորման երաշխավորված ծրագրերի պայմանագրերը վերանայված են՝ հստակ արտացոլելով յուրաքանչյուր ծրագրի վերջնարդյունքները և դրանց նկարագրերը, ինչպես նաև դրանք դարձնելով հանրային հասանելի: Վերանայված պայմանագրային	(0) 20	2026-2030թթ.	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջում	ԿԳՄՄՆ ԲԿԳԿ
3.6.3.	Գ3.6.3. Հայտերի և հաշվետվությունների հանրայնացում	Պետական ֆինանսավորում ստանալու համար հայտերի և հաշվետվությունների ընդունման առցանց հարթակների հիման վրա ստեղծված է հանրային հասանելիությամբ ինտերֆեյս, որի միջոցով տրվում է հասանելիություն ֆինանսավորման բոլոր ձևերով իրականացված և	(0) 1	2027թ. ապրիլի 3-րդ տասնօրյակ	10,000,000	ԿԳՄՄՆ ԲԿԳԿ

		իրականացվող ծրագրերի հանրային հասանելիության ենթակա հատվածներին և հաշվետվություններին: Առցանց կայքը պատրաստ է:				
3.6.4.	Գ3.6.4. Խոշոր սարքավորումների վերաբերյալ հանրային տեղեկատվություն	ՀՀ առկա համատեղ օգտագործման ենթակա սարքերի equipment.hesc.am տեղեկատվական հարթակը վերազինված է՝ հերթագրման առցանց համակարգի և սարքերի միջոցով իրականացված հետազոտությունների արդյունքներով հաշվետվությունների հանրային ներկայացման համար: Վերազինված առցանց հարթակ:	(1) 1	2027թ. ապրիլի 3-րդ տասնօրյակ	10,000,000	ԿԳՄՄՆ ԲԿԳԿ
3.6.5.	Գ3.6.5. Կատարողականի ցուցիչների միասնական ցանկ	Լիազոր մարմնի կողմից հաստատվել է ոլորտի կատարողականի գնահատման համար կիրառվող ցուցիչների միասնական ցանկը և յուրաքանչյուր ցուցիչի վերաբերյալ տվյալների հավաքագրման մեթոդաբանությունը, որի ինտերակտիվ առցանց տարբերակը տեղադրված է ԲԿԳԿ առցանց տիրույթում: Գիտության ոլորտի կատարողականի ցուցիչների միասնական ցանկը հաստատված է:	(0) 1	2026թ. հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջում	ԿԳՄՄՆ ԲԿԳԿ ՀՀ ԳԱԱ
3.6.6.	Գ3.6.6. Կազմակերպությունների կատարողականի վրա հիմնված ֆինանսավորում	Գիտական կազմակերպությունների ֆինանսավորման հայտերում ներդրված է կատարողականի ցուցիչների մեկնարկային և արդյունքային արժեքները, որոնք կլինեն տեղադրված տեղեկատվական առցանց հարթակի հանրային հասանելի տիրույթում: Բազային ֆինանսավորման հայտերի ձևաչափը վերանայված է:	(0) 1	2026թ. հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջում	ԿԳՄՄՆ ԲԿԳԿ
3.6.7.	Գ3.6.7. Ոլորտի վերաբերյալ վիճակագրության ցուցիչների և հասկացությունների միասնական ցանկ	Լիազոր մարմնի կողմից հաստատվել է ոլորտի վիճակագրության վարման և ոլորտի վերաբերյալ զեկույցների պատրաստման համար կիրառվող վիճակագրական ցուցիչների միասնական ցանկը և յուրաքանչյուր ցուցիչի վերաբերյալ տվյալների հավաքագրման մեթոդաբանությունը, որոնք համապատասխանում և ներառում են նաև միջազգային վիճակագրական կառույցների ցուցիչներն ու մեթոդաբանությունները, որի ինտերակտիվ առցանց տարբերակը տեղադրված	(0) 1	2027թ. հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջում	ԿԳՄՄՆ ԲԿԳԿ ՀՀ ԳԱԱ

		է ԲԿԳԿ առցանց տիրույթում: Միևնույն ժամանակ հաստատվել է ոլորտի հասկացությունների ցանկը և նկարագիրը՝ ոլորտի վերաբերյալ համակարգված և տերմինաբանության վերաբերյալ միանշանակ խոսույթի ձևավորման նպատակով: Գիտության ոլորտի վիճակագրության և տերմինաբանության ցուցիչների միասնական ցանկը հաստատված է:				
3.6.8.	Գ3.6.8. Ռազմավարության կատարման առցանց հարթակ	ԲԿԳԿ կայքում ոլորտի ռազմավարության կատարման ընթացքի և արդյունքների վերաբերյալ հանրային արդյունավետ հաղորդակցություն ապահովելու նպատակով ստեղծված է ռազմավարության առանձին ենթաբաժին՝ որտեղ ներկայացված է գործողությունների ծրագիրը՝ իր ժամանակացույցով և յուրաքանչյուր գործողության կատարման վերաբերյալ զեկույցների առանձնացված հատվածով: https://www.hesc.am/hy/strategy2030/ ենթաբաժինը ստեղծված է և թարմացվում է:	0 (1)	2026թ. հոկտեմբերի 2-րդ տասնօրյակ	1,500,000	ԿԳՄՄՆ ԲԿԳԿ
3.6.9.	Գ3.6.9. Փաստաթղթերի քանակի օպտիմալացում և թվայնացում	Մասնագիտական խմբի կողմից իրականացված է ԲԿԳԿ վարչարարության համար կիրառվող փաստաթղթերի ամբողջության վերանայում՝ օպտիմալացման, ոլորտի քաղաքականությունների ու ռազմավարական կառավարման նպատակներին համապատասխանեցման համար: 1. Մասնագիտական խումբը ձևավորված է: 2. Զեկույցի արդյունքներով իրականացված է վարչարարական գործընթացների օպտիմալացում և թվայնացում:	(0) 1 (0) 1	2026թ. հունիսի 2-րդ տասնօրյակ 2027թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ	1) 5,000,000 2) Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջում	ԿԳՄՄՆ ԲԿԳԿ
3.6.10.	Գ3.6.10. Բաց գիտության օրակարգի ամրապնդում	Լիազոր մարմնի կողմից ընդունվել է բաց գիտության (open science) ճանապարհային քարտեզը, որի իրականացմամբ ներդրված են գիտական տվյալների հնարավորինս լայն հասանելիության գործիքները, որոնք նաև երաշխավորում են դրանց հավաստիությունը և ստուգելիությունը: Հաստատված է բաց	(0) 1	2027 թ. հուլիսի 2-րդ տասնօրյակ	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջում	ԿԳՄՄՆ ԲԿԳԿ

		գիտության ճանապարհային քարտեզը:				
3.6.11.	Գ3.6.11. Գիտական փորձաքննության համակարգի բարելավում	Գիտական փորձաքննության համակարգը վերանայվել է ներառելով փորձագիտական եզրակացությունների հավաստման և կոնսենսուսային զեկույցի ձևավորման գործիքակազմը, ինչպես նաև մեծ լեզվական մոդելների օգտագործմամբ հավելյալ գրախոսության գեներացումը և դրա հաշվառումը փորձագետների կարծիքի հետ: 1. փորձաքննության կարգը մշակվել և ներառվել է դրամաշնորհային ֆինանսավորման կարգի մեջ: 2. Մեծ լեզվական մոդելների օգտագործմամբ գրախոսություններ ստանալու հարցաշարը (prompt) մշակված է և հաստատված է Կոմիտեի նախագահի հրամանով:	1. (1) 1 2.(0) 1	1. 2027 թ. հունիսի 1-ին տասնօրյակ 2. 2027 թ. նոյեմբերի 1-ին տասնօրյակ	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջում	ԿԳՄՄՆ ԲԿԳԿ
4.	ՌՆ-4 Վերակազմավորում և առաջխաղացում					
4.1.	ՄԱ4-1 *Հետազոտական ենթակառուցվածքների կոնսոլիդացում և արդյունավետություն* **Վերջնական արդյունք՝** գիտական կազմակերպությունները միավորած են խոշոր կենտրոններում և ինտեգրված են խոշորացված բուհական համակարգի հետ՝ 2030 թվականին ունենալով մինչև 15 խոշոր գիտական կազմակերպություն: Խոշորացման ճանապարհային քարտեզին զուգահեռ մշակված է արդեն ձեռք բերված խոշոր սարքավորումների հիման վրա համատեղ օգտագործման կենտրոնների ստեղծման հայեցակարգը, ինչպես նաև բացահայտված կարիքների հիման վրա իրականացվում են համապատասխան պակասող սարքավորումների և ենթակառուցվածքների ստեղծման ծրագրերը: Իրականացվում են միջգիտակարգային հետազոտությունների խրախուսման ծրագրեր 2030 թվականի դրությամբ՝ իրականացված և ընթացիկ 50 ծրագիր: Բազային ֆինանսավորման կարգում հստակեցված է ֆինանսավորման ձևի շրջանակում իրականացվող գիտական ծրագրերի արդիականության և արդյունավետության գնահատման ընթացակարգերը և իրականացված է գնահատման առաջին շրջափուլը:				
4.1.1.	Գ4.1.1. Գիտական կազմակերպությունների միավորման ճանապարհային քարտեզի մշակում	Լիազոր մարմնի կողմից հաստատված է «Հանրային Գիտական կազմակերպությունների միավորման և Ակադեմիական քաղաք ծրագրի շրջանակներում ըստ կլաստերների բաշխման ճանապարհային քարտեզը» որը ներառում է նաև բուհերի կազմում գործող գիտական կենտրոնների փուլային միացումը ինստիտուտների հետ: Հաստատված ճանապարհային քարտեզ:	(0) 1	2026 թ. նոյեմբերի 1-ին տասնօրյակ	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջում	ԿԳՄՄՆ ԲԿԳԿ / Գործընկեր առաջատար բուհեր
4.1.2.	Գ4.1.2. Գիտական կազմակերպությունների միավորում	Ճանապարհային քարտեզին համապատասխան՝ Կառավարության կողմից հաստատված են Հանրային գիտական կազմակերպությունների վերակազմակերպման որոշումները և	(0) <15	2027 թ. դեկտեմբերի 1-ին տասնօրյակ	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջում	ԿԳՄՄՆ ԲԿԳԿ / ԳԱԱ

		հաստատված են նոր կանոնադրությունները: Միավորված գիտական կազմակերպությունների թիվը				
4.1.3.	Գ4.1.3. Գիտական սարքավորումների համատեղ օգտագործման կենտրոնների ստեղծում խոշորացված գիտական կազմակերպություններում	ԲՏՃՄ ուղղվածության գիտական կազմակերպություններում ստեղծված են համատեղ օգտագործման գիտական կենտրոններ, որոնց հիմքը կազմում են արդեն ձեռք բերված խոշոր գիտական սարքավորումները: Համատեղ օգտագործման կենտրոնների համար սահմանված են սարքերի օգտագործման ընթացակարգերը և կազմակերպության կանոնադրությամբ և հաստիքացուցակով առանձնացված են կենտրոնների պահպանման ու սպասարկման համար հատկացվող անձնակազմի և ֆինանսավորման ծավալները: Համատեղ օգտագործման կենտրոնները զինված են անվտանգության և սարքերի պատշաճ շահագործման ենթակառուցվածքներով ու միջավայրով: Համատեղ օգտագործման կենտրոնների ծառայությունների և հետազոտությունների լիարժեքությունն ապահովելու նպատակով բացահայտված են կարիքները, և պետական ներդրումներն ուղղվում են այդ ուղղությամբ: 1) Կոնսոլիդացված և ֆինանսավորվող համատեղ օգտագործման կենտրոնների քանակ: 2) Կարիքների գնահատումն իրականացված է՝ այդ թվում արտերկրի մասնագետների ներգրավմամբ:	1. (1) 7-10 2. (0) 1	1. 2028թ. հունվարի 1-ին տասնօրյակ 2. 2027թ. ապրիլի 1-ին տասնօրյակ	1) 1,000,000,000 2) 180,000,000	ԿԳՄՄՆ ԲԿԳԿ / Գիտական կազմակեր-պու-թյուններ / «Ակադեմիական քաղաք» հիմնադրամ
4.1.4.	Գ4.1.4. Խոշորացված գիտական կազմակերպությունների ինտեգրում խոշորացված բուհերի հետ՝ կլաստերների ձևավորում:	Համաձայն կլաստերների բաշխման ճանապարհային քարտեզի, խոշորացված գիտական կազմակերպությունները միավորված են խոշորացված 6 համալսարանների հետ՝ համաձայն խոշորացված համալսարանների և գիտական կազմակերպությունների վերակազմակերպման մասին կառավարության որոշումների: Ակադեմիական քաղաք ծրագրի	(0) 6	2030 թ. մարտի 1-ին տասնօրյակ	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջում	ԿԳՄՄՆ ԲԿԳԿ / Գործընկեր առաջատար բուհեր

		հայեցակարգին համապատասխան կլաստերների թվաքանակ:				
4.1.5.	Գ4.1.5. Գիտությունից դեպի կիրառություն անցման համար՝ Ակադեմիական քաղաքում նախատիպավորման ենթակառուցվածքների կառուցում:	Ակադեմիական քաղաքում կառուցված են նախատիպավորման և փորձարարական արտադրության առնվազն 3 ենթակառուցվածքներ՝ սարքաշինության, քիմիական և կենսատեխնոլոգիական արտադրության և կիսահաղորդչային/էլեկտրոնային արտադրանքի նախատիպավորման կենտրոններ:	(0) 3	2030 թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ	6,000,000,000	ԿԳՄՄՆ ԲԿԳԿ / «Ակադեմիական քաղաք» հիմնադրամ
4.1.6.	Գ4.1.6. Միջգիտակարգային հետազոտությունների խրախուսման ծրագրի կազմակերպում:	Խոշորացվող գիտական կազմակերպությունների աշխատակիցների ներգրավման համար ըստ հայեցակարգի նախատեսվող առաջատար ուղղություններով միջգիտակարգային հետազոտությունների դրամաշնորհային ծրագրի իրականացում, որի նպատակն է նախանշված առաջատար և ժամանակակից ուղղություններով միավորվող կազմակերպությունների խմբերի միավորմամբ ձևավորվող խմբերով հետազոտությունների իրականացումը՝ միջազգային գործընկերների ներգրավմամբ: Ներառյալ ենթակառուցվածքների զինումը անհրաժեշտ սարքերով և սարքավորումներով: Իրականացվող ծրագրերի քանակ:	(0) 2027թ. – 5 2028 թ.– 10 2029թ. – 20 2030 թ.– 30	2027-2030 թթ. յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի 1-ին տասնօրյակի դրությամբ	1,500,000,000 3,000,000,000 6,000,000,000 15,000,000,000	ԿԳՄՄՆ ԲԿԳԿ
4.2.	ՄԱ4-2 *Կառավարման արդյունավետություն* **Վերջնական արդյունք՝** միջազգային գործընկեր համալսարանների ներգրավմամբ կվերապատրաստվեն բուհերի և գիտական կազմակերպությունների առնվազն 100 գործող կամ ապագա կառավարիչներ, և ՀՀ բուհերից առնվազն մեկում գործընկեր համալսարանների հետ համագործակցությամբ կներդրվի ոլորտների կառավարիչների պատրաստման սերտիֆիկացվող դասընթաց կամ կրթական ծրագիր, կվերանայվեն կառավարչական պաշտոնների անձնագրերն ու կներմուծվեն հաշվետվողականության ու պատասխանատվության մեխանիզմներ: Ներդրված է ղեկավար պաշտոններում ընտրության բաց և թափանցիկ մեխանիզմներ, ինչպես նաև սահմանված է ղեկավար պաշտոններին ներկայացվող հմտությունների և որակավորման շրջանակը: Բազային ֆինանսավորման կարգերում ներդրվելու է թերի վարչարարության կանխման կամ դրա համար պատասխանատվության գործիքներ՝ որոնք կարտացոլվեն վարչական ապարատին հատկացվող ֆինանսավորման ծավալներում: Բազային ֆինանսավորման կարգում ներդրված է վարչական կազմի քանակին ներկայացվող չափանիշները, ինչպես նաև խոշոր ենթակառուցվածքների դեպքում առանձին ընթացակարգով դրանց պատշաճ պահպանումը ֆինանսավորելու մեխանիզմները: «Ակադեմիական քաղաք» ծրագրի շրջանակներում կառուցվող շինությունների համար սահմանված են ռեսուրսների խնայողության չափանիշները և շինությունները նախագծված են խնայողության նկատառումներով: Խոշորացման ճանապարհային քարտեզին զուգահեռ մշակված է արդեն ձեռք բերված խոշոր սարքավորումների հիման վրա համատեղ օգտագործման կենտրոնների ստեղծման հայեցակարգը, ինչպես նաև բացահայտված կարիքների հիման վրա իրականացվում են համապատասխան պակասող սարքավորումների և ենթակառուցվածքների ստեղծման				

	ծրագրերը:					
4.2.1.	Գ.4.2.1. Բուհերի և գիտական կազմակերպությունների ղեկավար պաշտոններում աշխատողների կամ հավակնորդների վերապատրաստումներ գործընկեր առաջատար բուհում:	«Ակադեմիական քաղաք» ծրագրի շրջանակներում ներգրավված գործընկեր առաջատար բուհի կողմից մշակված բարձրագույն կրթության և գիտության ոլորտի կառավարիչների հիբրիդային ծրագրով վերապատրաստված են մինչև 100 ղեկավար պաշտոններում գտնվող կամ հավակնող անձինք, ներառյալ ակադեմիական ստորաբաժանումների ղեկավարները: Վերապատրաստմանը մասնակցած անձանց քանակ:	(0) 50 100	2028-2029 թթ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջում	ԿԳՄՄՆ ԲԿԳԿ
4.2.2.	Գ4.2.2. Համալսարաններից առնվազն մեկում բարձրագույն կրթության և գիտության ոլորտի կառավարիչների վերապատրաստման ծրագրի ներդրում	«Ակադեմիական քաղաք» ծրագրի շրջանակներում գործընկեր առաջատար բուհի հետ համագործակցությամբ ներդրված է ոլորտի կառավարիչների վերապատրաստման սերտիֆիկացված ծրագիրը, որի դասախոսական կազմը վերապատրաստված և ընտրված է գործընկեր բուհի կողմից: Ծրագրի առանձին մոդուլների ընդգրկված են դոկտորանտուրայի ծրագրերում: Ներդրված կրթական ծրագիր:	(0) 1	2029 թ. սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջում	ԿԳՄՄՆ ԲԿԳԿ
4.2.3.	Գ4.2.3. Գիտական աշխատողների ատեստավորման կարգի վերանայում՝ գիտական ղեկավար պաշտոնների պահանջների և պատասխանատվության շրջանակի սահմանում	Գիտական ղեկավար պաշտոնների (լաբորատորիայի կամ խմբի ղեկավար) համար վերանայված է ներկայացվող պահանջները և պատասխանատվությունների շրջանակը, ներմուծված է հաշվետվողականության մեխանիզմները, որոնց շրջանակներում գիտական ստորաբաժանումների ղեկավարները կրելու են անմիջական պատասխանատվություն գիտական ստորաբաժանման արդյունավետության համար, ինչպես նաև ավելի ինստիտուցիոնալ ու հաշվետու ձևով են տնօրինելու (կամ մասնակցելու տնօրինմանը) ստորաբաժանման կադրային, նյութատեխնիկական և ֆինանսական ռեսուրսները: Գիտական կադրերի ատեստավորման կարգը վերանայված է:	1	2026թ. հոկտեմբերի 1-ին տասնօրյակ	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջում	ԿԳՄՄՆ ԲԿԳԿ

4.2.4.	Գ4.2.4. Գիտական կազմակերպությունների ղեկավարների ընտրության պայմաններ	Լիազոր մարմնի կողմից հաստատվել է գիտական կազմակերպության ղեկավար պաշտոնների համալրման մրցույթի անցկացման ուղեցույցը, ինչպես նաև այդ պաշտոնների համալրման համար որակավորումների և հմտությունների շրջանակը, որոնց հիման վրա նմանատիպ պահանջները ամրագրված են խոշորացված գիտական կազմակերպությունների կանոնադրություններով: Հաստատված ուղեցույց:	0 (1)	2026թ. հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջում	ԿԳՄՄՆ ԲԿԳԿ
4.2.5.	Գ4.2.5. Բազային ֆինանսավորման կարգի վերանայում	Գիտական կազմակերպություններին բազային ֆինանսավորման կարգում կատարված են համապատասխան փոփոխություններ, որով սահմանափակվում են վարչական և սպասարկող աշխատակիցների համամասնությունը ընդհանուր աշխատակիցների կազմի մեջ՝ մինչև առավելագույնը 25% կախված գիտական կազմակերպության հետազոտությունների բնույթից (տեսական հետազոտություններով զբաղվող կազմակերպությունների դեպքում ավելի քիչ համամասնությամբ): Խոշոր կամ պահպանության հատուկ կարիք ունեցող ենթակառուցվածքների առկայության դեպքում դրանց պահպանման համար առանձնացված անձնակազմը և ֆինանսավորումը տրամադրվում են առանձին հայտով: Բազային ֆինանսավորման կարգի փոփոխությունները հաստատված են:	1 (1)	2026թ. հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջում	ԿԳՄՄՆ ԲԿԳԿ
4.2.6.	Գ4.2.6. Թվային վարչարարություն	Համալսարաններում և դրանց կազմում գործող գիտական կազմակերպություններում ներդրված են վարչարարության թվային գործիքներ, որոնց միջոցով կրճատված է անհարկի վարչական ապարատի կազմ ունենալու անհրաժեշտությունը: Թվային վարչարարության գործիքակազմը ներդրված է խոշորացված հանրային գիտական կազմակերպություններում:	(0%) 100%	2029թ. հունիսի 3-րդ տասնօրյակ	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջում	ԿԳՄՄՆ ԲԿԳԿ
4.2.7.	Գ4.2.7. Պատշաճ վարչարարություն	Գիտական կազմակերպությունների ֆինանսավորման կարգերով և համապատասխան մեթոդաբանությամբ ներդրված է վարչական ապարատի աշխատանքի	(0) 1	2027թ. հուլիսի 3-րդ տասնօրյակ	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջում	ԿԳՄՄՆ ԲԿԳԿ

		արդյունավետության գնահատման համակարգ, որն անդրադառնում է վարչական կազմին տրամադրվող ֆինանսավորման վրա: Բազային ֆինանսավորման կարգում կամ պայմանագրերում ներառված կարգավորումներ:				
4.2.8.	Գ4.2.8. Ռեսուրսախնայող ենթակառուցվածքներ	«Ակադեմիական քաղաք» ծրագրի շրջանակներում նախագծվելիք շինությունների համար ռեսուրսախնայողական սկզբունքները սահմանված են այնպես, որ շինությունները կառուցվեն այնպես, որ հնարավորինս սահմանափակեն էլեկտրական էներգիայի, ջրի և այլ ռեսուրսների անհարկի կիրառությունը և օգտագործեն վերականգնվող ռեսուրսներ: Ուղեցույցը մշակված է:	0 (1)	2026թ. սեպտեմբերի 1-ին տասնօրյակ	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջում	ԿԳՄՄՆ ԲԿԳԿ
4.3.	ՄԱ4-3 Խոշորացված կլաստերներում գիտական և կրթական գործունեության համուղում **Վերջնական արդյունք՝** համալսարաններում ներդրված է պայմանագրերի ճկուն և պարզ համակարգ, որը թույլ է տալիս մեկ պայմանագրի շրջանակներում աշխատակցի հետ կազմակերպել ծանրաբեռնվածությունների տեսակների և մակարդակի կարգավորման հնարավորություններ, ներդրված են խրախուսման մեխանիզմներ դասավանդման կամ կրթական պրոցեսում ներգրավման համար, ինչպես նաև ամբողջությամբ հետազոտական աշխատանքով զբաղվելիս՝ համապատասխան հավելյալ պայմաններ: Կրթական և հետազոտական գործունեություններում ակադեմիական կազմի ներգրավումը կազմակերպվում են հասկանալի մեխանիզմներով՝ յուրաքանչյուր գործունեության տեսակի համար ունենալով առանձին շրջանակ, ինչը թույլ կտա խուսափելու հնարավոր «գորշ» հատվածներից: Գիտական կազմակերպությունների կառուցվածքում առկա են ուսումնահետազոտական ժամանակակից լաբորատորիաներ կամ տարածքներ՝ ուսանողների լաբորատոր պարապմունքների և հետազոտական աշխատանքների իրականացման համար:				
4.3.1.	Գ4.3.1. Կրթական և հետազոտական աշխատանքների հավասարակշռում	Խոշորացված կլաստերներում միջազգային գործընկեր համալսարանների հետ ձևակերպված է ներքին վարչարարության այնպիսի մոդել, որի պարագայում ակադեմիական կազմի աշխատակիցը կարողանում է ճկուն եղանակով և իր հետազոտական կամ դասավանդման նախընտրություններին համապատասխան կարգավորել ծանրաբեռնվածությունները: 1) Ուղեցույցը կազմված է: 2) Անհրաժեշտ կարգավորումները ներդրված են ոլորտը կարգավորող ենթաօրենսդրական ակտերում և կանոնադրություններում:	(0) 1	1)2026թ. սեպտեմբերի 1-ին տասնօրյակ 2) 2027թ. հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջում	ԿԳՄՄՆ ԲԿԳԿ
4.3.2.	Գ4.3.2. Գիտական գործունեության կազմակերպում	Կլաստերների կազմում գործող գիտական կազմակերպությունների գործունեության համար սահմանված են շրջանակները, որոնց	0 (1)	2) 2027 թ. հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջում	ԿԳՄՄՆ ԲԿԳԿ

	կլաստերներում	կիրարկումը երաշխավորում է գիտական գործունեության կազմակերպման այնպիսի մոդել, որը չի խոչընդոտում կազմակերպություններին զբաղվել հիմնականում հետազոտական աշխատանքներով՝ միաժամանակ երաշխավորելով ուսանողների ներգրավումը հետազոտական աշխատանքներին, ինչպես նաև հավաստելով իրականացվող հետազոտությունների առաջադեմ բնույթը: Շրջանակը սահմանված է և անհրաժեշտ շտկումներն արված են իրավական ակտերում:				
4.3.3.	Գ4.3.3. Ուսումնահետազոտական լաբորատորիաներ	Գիտական կազմակերպություններում տեղակայված են համալսարանական ուսումնահետազոտական լաբորատորիաները, որտեղ կազմակերպվում են ուսանողների լաբորատոր դասընթացները, ինչպես նաև ըստ մասնագիտական ուղղությունների պահանջների՝ տրամադրում են տարածքներ և հնարավորություններ ուսանողների հետազոտական աշխատանքների իրականացման համար: Ուսումնահետազոտական լաբորատորիաների տեղակայման և աշխատանքի մոդելի հայեցակարգը պատրաստ է:	0 (1)	2026թ. հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջում	ԿԳՄՄՆ ԲԿԳԿ
4.4.	ՄԱ4-4 Միջազգային նշանակության հետազոտական ենթակառուցվածքներ **Վերջնական արդյունք՝** Ակադեմիական քաղաքի տարածքում կամ դրա շրջանակներում ստեղծվել է առնվազն մեկ միջազգային նշանակություն և հետաքրքրություն ներկայացնող հետազոտական խոշոր ենթակառուցվածք, որը հասանելի է գործընկերների համար՝ նախապես հայտարարած պայմաններով:					
4.4.1.	Գ.4.4.1. Միջազգային նշանակության ենթակառուցվածքների բացահայտում	Մասնագիտական խմբերի միջոցով, ըստ հնարավորության ԵՄ գործընկերների ներգրավմամբ, իրականացվել է գոյություն ունեցող հետազոտական խոշոր ենթակառուցվածքների վերաբերյալ տվյալների հավաքագրում, դրանց առաջխաղացման հնարավորությունների ուսումնասիրություն և գերակայությունների հետ համադրում: Կազմված է վերլուծական և խորհրդատվական փաստաթուղթ:	0 (1)	2028թ. հոկտեմբեի 3-րդ տասնօրյակ	10,000,000	ԿԳՄՄՆ ԲԿԳԿ

4.4.2.	Գ4.4.2. Միջազգային նշանակության ենթակառուցվածքի ստեղծում	Ակադեմիական քաղաք ծրագրի կամ գիտական համակարգի բարեփոխումների շրջանակում՝ խորհրդատվական փաստաթղթի հիման վրա իրականացվել է առնվազն մեկ ենթակառուցվածքի վերազինում՝ համակարգի վերազինման գործընթացի շրջանակներում և իրականացվել է դրա ինտեգրումը միջազգային կոնսորցիումների մեջ կամ հանդիսանում է միջազգային հետազոտական ենթակառուցվածք՝ օգտագործման ընթացակարգերով: Միջազգային խոշոր հետազոտական ենթակառուցվածքի քանակ:	0 (1)	2030թ. հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում	ԿԳՄՄՆ ԲԿԳԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

30.01.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ